# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 50 (1500) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 15, 2011
VOLUME 30, NO. 50 (1500) SATURDAY, JANUARY 15, 2011

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՀԱՅԱՍՏԱՆ ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ ՏՈՒԱՒ ՕՀԱՆ ԴՈՒՐԵԱՆԻՆ

Երկուշաբթի, Յունուար 10-ին Երեւանի Օփերայի եւ Պալետի Ազգային Ակադեմական Թատրոնին մէջ կայացաւ աշխարհահռչակ խմբավար Օհան Դուրեանի քաղաքացիական հոգեհանգստի արարողութիւնը:



Օհան Դուրեան ընդդիմադրութեան հանրահաւաքներէն մէկուն ընթացքին

Օհան Դուրեանին հրաժեշտ տալու եկած էին արուեստի տարբեր ոլորտներու ներկայացուցիչներ եւ քաղաքական ուժերու ղեկավարներ, քաղաքական գործիչներ ընդդիմադիր եւ իշխող կուսակցութիւններէն: Դուրեանի քաղաքացիական հոգեհանգստին մասնակցեցան նաեւ Հայաստանի առաջին տիկին Ռիտա Սարգսեան, Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան եւ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Մեծանուն խմբավարը վախճանած էր Յունուար 6-ի առաւօտեան 88 տարեկան հասակին:

«Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբի ղեկավար Տիգրան Հեքեքեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին ըսած է, թէ Օհան Դուրեանի մահը ազդակ էր, որ մեծերուն կենդանութեան օրօք է պէտք ուշադրութիւն դարձնել:

«Մենք այսօր նրան հրաժեշտ ենք տալիս ֆիզիկապէս, բայց որպէս դիրիժոր մենք նրան հրաժեշտ ենք տուել շատ աւելի վաղուց, երբ նա դեռ կարող էր համերգներ, տեսագրութիւններ, ձայնագրութիւններ կատարել, աշխարհ նուաճել եւ աշխարհին ցոյց տալ, թէ ինչ է հայ

Շար.ը էջ 4

## ԷՐՏՈՂԱՆ ՄԻՋԱՄՏԱԾ Է ՔԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ԹՈՒՐՔԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆԸ» ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ԱՐՁԱՆԸ



Հայերու եւ թուրքերու բարեկամութիւնը խորհրդանշող արձանը Կարսի մէջ

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Էրտողանի միջամտութեամբ քանդուած է Կարսի մէջ կառուցուած եւ հայերու ու թուրքերու բարեկամութիւնը խորհրդանշող արձանը: Այս մասին կը տեղեկացնէ ամերիկեան «Ըը Ուոլ Սթրիթ Ճուրնըլ» (The Wall Street Journal) օրաթերթը, որ այս որոշումը կը ներկայացնէ որպէս դրացի երկիրներուն միջեւ սահմանը բանալու եւ յարաբերութիւնները կարգաւորելու ջանքերու սառեցման նշան:

Էրտողան կարս այցելած է անցեալ Շաբաթ օրը: Արձանի մասին ան ըսած է, թէ այն տգեղ է եւ Կարսի քաղաքապետին խորհուրդ տուած է քանդել զայն ու մինչեւ իր յաջորդ այցելութիւնը, արձանի փոխարէն այգի կառուցել:

Կարսի քաղաքապետը կը պատկանի Էրտողանի գլխաւորած «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան:

Թրքական պաշտօնական «Անատոլու» լրատուական գործակալութիւնը իր կարգին կը տե-

Շար.ը էջ 4

## ՏՕՔԹ. ՃԷՔ ԳԷՈՐԳԵԱՆ ՊԻՏԻ ԴԱՍԱԽՕՍԷ «ԵՈՒ. ՍԻ. ԷԼ. ԷՅ.» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Շաբաթ, Յունուար 15-ին, «ԵՈՒ. ՍԻ. ԷԼ. ԷՅ.» Համալսարանէն ներս ի պատիւ իրեն տեղի ունենալիք երեկոյի մը ընթացքին պիտի դասախօսէ, Միացեալ Նահանգներու ամենէն ծանօթ բժիշկներէն մէկը նկատուող Տօքթ. Ճէք Գէորգեան:



Տօքթ. Ճէք Գէորգեան

Միջոցառումը կազմակերպուած է Համալսարանի Հայ Ուսանողներու Միութեան կողմէ, գործակցութեամբ Քալիֆորնիոյ Հայ Բժիշկներու միութեան: Երեկոն պիտի վարէ «ԵՈՒ. ՍԻ. ԷԼ. ԷՅ.» համալսարանի շրջանաւարտ եւ Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար Րաֆֆի Յովհաննիսեան:

Որպէս գթամահութեան հաւատացող բժիշկ, Ճէք Գէորգեան 1950-ական թուականներէն սկսեալ կը պաշտպանէր անդարմանելի հիւանդներու կողմէ իրենց մահուան պահը որոշելու իրաւունքը: Տօքթ. Գէորգեան իր հնարած գործիքի միջոցաւ օգնած է շուրջ 130 հիւանդներու՝ վերջ դնելու իրենց տառապանքներուն: Իր այս գործունէութեան համար Գէորգեան դատուած է հինգ անգամ, միշտ ալ անմեղ դուրս գալով:

Սակայն, 1999-ին Գէորգեանի դէմ ներկայացուեցաւ սպանութեան մեղադրանք: Դատարանի կողմէ յանցաւոր նկատուելով, դատապարտուեցաւ 10-25 տարուայ բանտարկութեան: 8 տարի բանտը մնալէ ետք, ան 2007-ին ազատ արձակուեցաւ առողջական պատճառներով:

2010 թուականին HBO հեռատեսիլի ընկերութեան կողմէ Գէորգեանի մասին պատրաստուած ֆիլմի գլխաւոր դերակատարն էր, յայտնի դերասան Ռոպերդ Տէ Նիրօ, որ արժանացաւ նոյն տարուայ լաւագոյն դերասանի «Էմմի» մրցանակին:

Տօքթ. Ճէք Գէորգեան պիտի խօսի իր պատանեկութեան, 1915 թուականի Եղեռնէն վերապրող իր ծնողներու եւ բանտէն դուրս գալէ ետք գործունէութեան մասին:

Դասախօսական երեկոն տեղի պիտի ունենայ Յունուար 15-ին, ժամը 7-ին, «ԵՈՒ. ՍԻ. ԷԼ. ԷՅ.»-ի «Ռոյս» սրահէն ներս: Մուտքը 20 տոլար է:

## ԹՐՔԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Վերջերս Անգարայի մէջ տեղի ունեցած է Թուրք դեսպաններու 3-րդ համաժողովը, որուն ներկայ եղած են աշխարհի տարբեր երկիրներու մէջ հաւատարմագրուած թրքական դիւանագիտական առաքելութիւններու ղեկավարներն ու ներկայացուցիչները:

Թուրք լրագրող եւ յօդուածագիր Ուլթքու Ջաքըրօզերի տեղեկութիւններուն համաձայն, որ հրապարակուած է Անգարայի մէջ գործող Եւրասիական Ռազմավարական Հետազօտութիւններու Կեդրոնի կայքին մէջ, կը տեղեկանանք, որ հաւաքին մասնակցող 150 թուրք դիւանագէտներու քննարկած հիմնական թեմաները եղած են Հայոց Ցեղասպանութեան հարցը, հայթրքական գործընթացը, եւ որքան ալ զարմանալի է՝ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտի Բանակը (ԱՍԱԼԱ): Ի դէպ, այս վերջին թեմային քննարկումը տեղի ունեցած է անձամբ Թուրքիոյ Ազգային Հետախուզական Կազմակերպութեան (MIT) ղեկավար Հաքան Ֆիտանի մասնակցութեամբ:

«Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեթ Տաւութօղլու եւ արտաքին քաղաքական գերատեսչութեան բարձրաստիճան պաշտօնեաները Անգարա հրաւիրած էին Թուրքիոյ բոլոր դեսպանները՝ յառաջիկայ տարիներուն թրքական արտաքին քաղաքական ուղեգիծին առնչութեամբ կարծիքներ փոխանակելու համար: Համաժողովի ընթացքին քննարկուած ամենակարեւոր թեման Հայկական հարցն էր: Օրակարգի մէջ էր նաեւ անցած տարուան Դեկտեմբերին Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Եւրոպայի տարբեր երկիրներուն մէջ գործող թրքական դեսպանատուներուն ԱՍԱԼԱ հայկական խմբաւորման կողմէն ուղարկուած «Զգուշացնէ՛ք, մի կարծէք, թէ մենք այլեւս գոյութիւն չունինք: Ձեզի հետ հաշուեյարդար պիտի տեսնենք» բովանդակութեամբ սպառնալիքները»,- կը գրէ թուրք յօդուածագիրը, յատնելով, որ ԱՍԱԼԱ-ի այդ լուրը, բառին բուն իմաստով, ոտքի հանած էր ողջ Անգարան:

Շար.ը էջ 4

# ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Իւրաքանչիւր քաղաքացիական շարժում պէտք է ունենայ պայքարի յստակ մեխանիզմներ: Այս պարզ ճշմարտութիւնը, երբեմն, պատշաճ կերպով չի կարեւորւում պայքարողների կողմից, ինչի հետեւանքով պայքարը դառնում է տարերային, անկազմակերպ, ներքին տրամաբանութիւնից զուրկ:*

*Ինչպիսի՞ մեխանիզմներ կարելի է կիրառել ձեւականօրէն դեմոկրատական համարուող պետութիւնում իրական դեմոկրատական ռեժիմ ստեղծելու համար մղուող պայքարում: Կարծում ենք, որ մի շարք գործուն մեխանիզմներ կարելի է գտնել «քաղաքացիական անհնազանդութեան» զինանոցում:*

*«Քաղաքացիական անհնազանդութեան» կոնցեպցիան, որը մշակուել է ամերիկացի Հենրի Դաւիթ Թորոյի եւ հնդիկ Մահաթմա Գանդիի կողմից, յաջողութեամբ կիրառուել է ինչպէս ազգերի ինքնորոշման համար, այնպէս էլ առանձին անարդարութիւնների դէմ մղուող պայքարներում: Քաղաքացիական անհնազանդութեան էութիւնը հետեւեալն է. անհնազանդութեան մասնակիցները իրականացնում են յատուկ տեսակի հրապարակային, խաղաղ բնոյթ ունեցող բողոքի գործողութիւններ, որոնց ժամանակ ցուցադրում են իրենց անհնազանդութիւնը սահմանադրականութեան եւ դեմոկրատիայի սկզբունքներին դէմ գնացող իշխանութեանը, կամ նրա կողմից վարուող այս կամ այն քաղաքականութեանը, կամ ինչ-որ օրէնքին/ներին: Նման գործողութիւնների խնդիրն է՝ հասարակութեան ուշադրութեան սեւեռելը բողոքողների կողմից բարձրացուող խնդրին/ներին եւ իշխանութիւնների վրայ ճնշում գործադրելը՝ նպատակ ունենալով նպաստել նրանց վարքի փոփոխութեանը կամ հասնել նրանց հրաժարականին:*

*Քաղաքացիական անհնազանդութեան ակցիաներն ամբողջութեամբ պէտք է տեղաւորուեն սահմանադրականութեան շրջանակներում: Սակայն, երբեմն, դրանք կարող են ուղեկցուել առանձին օրէնքների հրապարակային, գիտակցուած խախտումներով (օրինակ՝ ճանապարհային երթեւեկութեան կանոնների խախտումներ, հարկերի չվճարում եւ այլն): Քաղաքացիներն այդ խախտումներին գնում են միայն այն ժամանակ, երբ պայքարի բոլոր մնացած մեթոդները սպառում են իրենց: Ի դէպ, նման ակցիաների մասնակցիները պէտք է պատրաստ լինեն օրէնքի սահմաններում «վճարել» օրէնքի խախտումների դիմաց:*

*Հարկ է նշել նաեւ, որ քաղաքացիական անհնազանդութեան ակցիաները բացառապէս խաղաղ բնոյթ պէտք է կրեն: Դրանց ժամանակ իշխանութեան ներկայացուցիչների կարգադրութիւններին չհնազանդուելը, եթէ լինում է դրա անհրաժեշտութիւնը, պէտք է կրի միայն պասիւ բնոյթ: Նման ակցիաների ժամանակ ոչ մի դէպքում չի կարելի ագրեսիւ պահուածք որդեգրել իշխանութեան ներկայացուցիչների եւ ընդհանրապէս, ոեւէ մէկի նկատմամբ:*

*Քաղաքացիական անհնազանդութիւնը, ընդհանուր առմամբ, ի զօրու է ուժազրկել ավտորիտար իշխանութիւններին եւ այդ առումով այն լաւագոյնս կարող է նպաստել բռնապետական ռեժիմների տապալմանը: Ընդհանրապէս, պէտք է նշել, որ բռնապետութիւնները գոյատեւում են այն պատճառով, որ ունեն մարդկային ռեսուրս, որը հնազանդւում է բռնապետներին, համագործակցում է նրանց հետ: Քաղաքացիական անհնազանդութիւնը զրկում է ավտորիտար իշխանութեանը նրա ուժի ամենակարեւոր աղբիւրից՝ ռեժիմի նկատմամբ ցուցաբերուող քաղաքացիների հնազանդութիւնից: Քաղաքացիական անհնազանդութեան միջոցառումները նաեւ պահանջում են շատ լուրջ կարգապահութիւն եւ կազմակերպուածութեան բարձր մակարդակ, ինչն իր հերթին նպաստում է դեմոկրատական հանրութեան ձեւաւորմանն ու ամրապնդմանը:*

*Իսկ այժմ դիտարկենք քաղաքացիական անհնազանդութեան զինանոցի մի քանի կոնկրետ ակցիաներ, որոնց կիրառումը, մեր կարծիքով, կարող է բաւականին արդիւնաւէտ լինել մերօրեայ Հայաստանում դեմոկրատիայի համար մղուող պայքարում: Պէտք է նշել, որ քաղաքացիական անհնազանդութեան մի շարք կարեւոր ակցիաներ մեր երկրում արդէն իսկ իրականացուել եւ/կամ իրականացւում են ժողովրդավարութեան համար պայքարող տարբեր քաղաքական եւ հասարակական խմբերի եւ կառոյցների կողմից եւ այդ իսկ պատճառով ստորեւ կը ներկայացնենք մի քանի ակցիաների տեսակներ, որոնք կամ չեն կիրառուել, կամ էլ կիրառուել են ոչ պատշաճ կերպով:*

*- Անհնազանդութեան գաղափարի տարածում: Զափազանց անհրաժեշտ է հանրայնացնել իշխանութիւնների հետ չհամագործակցելու (այն դէպքում, երբ իշխանութիւններն իրենք իրենց վեր են դասում սահմանադրական նորմերից) գաղափարը հասարակութեան հնարաւորինս լայն շրջանակներում: Դա կարելի է կատարել մի շարք միջոցներով: Օրինակ, կարելի է տարբեր հասարակական կազմակերպութիւնների ծրագրերի շրջանակներում կազմակերպել յատուկ սեմինարներ: Հայաստանում գոյութիւն ունեն մի շարք ակտիւ քաղաքացիական դիրքորոշում ունեցող հասարակական կազմակերպութիւններ, որոնք ունեն բաւականին մեծ թուով շահառուներ: Արդիւնաւէտ կը լինէր, եթէ բոլոր նման կազմակերպութիւնները սերտօրէն համագործակցէին միմեանց հետ նմանատիպ սեմինարներ կազմակերպելու նպատակով: Անկախ նրանից, թէ ինչ տիպի ծրագիր, գործունէութիւն է իրականացնում կազմակերպութիւնը, միշտ հնարաւոր է առնուազն մէկ-երկու սեմինար նուիրել քաղաքացիական պայքարի խնդրին: Այդ միջոցառումները կարելի է տեսագրել, տեսագրութիւնը տեղադրել համացանցում, թուային կրիչներով տարածել տարբեր հասարակական վայրերում: Զուգահեռ դրան օգտակար կը լինի նաեւ քաղաքացիական շարժումների մասին պատմող տարբեր որակեալ վաւերագրական եւ գեղարուեստական ֆիլմերի բազմացումը եւ տարածումը;*

*- Իշխանական քարոզչութիւն*

*Շար.ը էջ 19*

# ՔՈՉԱՐԵԱՆ-ՍԱՐԳՍԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Ռուսաստանի այսպէս ասած համապետական սփռման հեռուստաալիքներն, անդրադառնալով այդ երկրի Պետխորհրդի ընդլայնուած նիստին, որեւէ կերպ չանդրադարձան այն պոլեմիկային, որ ծաւալուեց նախագահ Մեդվեդեւի եւ վարչապետ Պուտինի միջեւ: Պետխորհրդի նիստի թեման Մեդվեդեւը փոխեց հենց նիստի ընթացքում, առաջարկելով անդրադառնալ ազգամիջեան բախումների խնդրին: Ահա այդ համատեքստում էլ Պուտինը յիշատակեց ԽՍՀՄ օրինակը, իսկ Մեդվեդեւը դրան հակադարձեց, որ ԽՍՀՄ անցած էտապ է եւ այդ ժամանակի մեթոդներն այժմ կիրառելի չեն:*

*Ակնյայտ է, որ Մեդվեդեւն ու Պուտինը մղում են մօտեցումների, մտածողութեան, վերջին հաշուով՝ իշխանութեան պայքար: Եւ շատերին այդ համատեքստում յուզում է հարցը, թէ արդեօք այդ պայքարն իրական է, արդեօք դա իմիտացիա չէ, որի շնորհիւ Մեդվեդեւն ու Պուտինն ինչ որ խաղ են խաղում եւ ամրապնդում իրենց իշխանութեան երաշխիքային համակարգը:*

*Գրեթէ նոյն հարցը պարբերաբար բարձրանում է Հայաստանի պարագայում. կա՞ն արդեօք հակասութիւններ Սերժ Սարգսեանի եւ Ռոբերդ Քոչարեանի միջեւ, թէ այդ ամէնը յօրինուածք է, իմիտացիա, եւ իրականում նրանք միասին հող են տանում իշխանութեան շարունակականութեան եւ ամրութեան համար:*

*Երկու դէպքում էլ, թէ Ռուսաստանի, թէ Հայաստանի, պատասխանը թերեւս գտնւում է միեւնոյն հարթութեան վրայ: Այդ պատասխանն ընդհանրապէս ունիվերսալ է եւ կարելի է պայմանականօրէն կոչել «իշխանութեան հարց» կամ «իշխանութեան խնդիր»:*

*Այն երկրներում, որտեղ իշխանութիւնը հիմնուած չէ սահմանադրական եւ օրէնսդրական մեխանիզմների վրայ, որտեղ իշխանութեան ձեւաւորումը ընթանում է արտասահմանադրական ճանապարհով, դե ժուրէ իշխանութիւն ունեցող անձանց համար խիստ վտանգաւոր է ունենալ դրան համարժէք դե ֆակտո «բաժնետէր» կամ «գործընկեր»: Ստացւում է, որ իրաւասութիւնների, լիազօրութիւնների, ազդեցութեան առումով նրանք հաւասար են, իսկ պատասխանատուութեան տեսանկիւնից դե ժուրէ իշխանութեան կրողի բեռն աւելին է, քանի որ համակարգի առաջ ունեցած պատասխանատուութիւնից բացի նա ունի նաեւ թէ երկրի քաղաքացիների, թէ միջազգային գործընկերների առաջ ունեցած պատասխանատուութիւն:*

*Այլ հարց է, թէ ինչ մակարդակով, ինչ արդիւնաւէտութեամբ եւ պարտաճանաչութեամբ է այդ պատասխանատուութիւնն իրականացւում: Բայց պատասխան տուողը նա է: Հետեւաբար, տրամաբանական եւ բնական պահանջ է առաջանում, որ «եթէ դե պատասխանատուն միայն ես եմ, ուրեմն իշխանութիւնը ոչ միայն դե ժուրէ, այլ նաեւ դե ֆակտո պէտք է լինի միայն իմը, եւ ես պէտք է որոշեմ, թէ դրանից ում ինչքան եմ բաժանում»:*

*Հայաստանում այժմ թերեւս տեղի է ունենում հենց այդ գործընթացը: Այսինքն, Սերժ Սարգսեանը փորձում է վերցնել ու անձամբ բաժանել, քանի որ մինչ այժմ նա մեծ հաշուով տնօրինում է Ռոբերդ Քոչարեանի բաժանածը: Իսկ ինչպէս պարականոնն է ասում՝ տիրում է նա, ով բաժանում է:*

*Հետեւաբար, Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի միջեւ հակասութեան առումով խնդիրը նրանց միմեանց հանդէպ անձնական վերաբերմունքը կամ աշխարհայեացքը չէ, այլ իշխանութիւն հասկացութեան բնական պահանջը: Խնդիրը միայն այն է, որ Ռոբերդ Քոչարեանը չի ցանկանում կամ չէր ցանկանում նուազեցնել սեփական իշխանութիւնը, ինչը նոյնպէս նորմալ է այն մարդու համար, ով երկիրը մօտ մէկ տասնամեակ ղեկավարել է Սահմանադրութեան եւ օրէնքների շղարշի ներքոյ, բայց արտասահմանադրական մեխանիզմներով:*

*Այդ կառավարիչների համար հաւասարապէս վտանգաւոր է թէ այն վիճակը, երբ արտասահմանադրական մեխանիզմներն են շարունակում իշխել, թէ այն վիճակը, երբ սկսում է իշխել Սահմանադրութիւնը: Մի դէպքում վտանգ կայ լինել արտասահմանադրական համակարգի յարատեւութիւնը սնուցող «վառելիք», միւս դէպքում վտանգ կայ լինել արտասահմանադրականից սահմանադրականի անցման «զոհ»:*

*Այդ պարագայում միակ քիչ թէ շատ յուսալի հանգրուանը պրոցէսների գլխին լինելն է: Թերեւս այստեղ է Սերժ Սարգսեան-Ռոբերդ Քոչարեան փոխյարաբերութեան ամբողջ խնդիրը:*

*«ԼՐԱԳԻՐ»*

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
**Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԱՆՐԱՀԱՒԱՔԸ ԸՆԴԴԷՄ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ



**Տեսարան մը ի պաշտպանութիւն փակուած հեռատեսիլի ալիքին**

*«Ո՛չ անարդարութեանը», «Ո՛չ բռնապետութեանը», «Հերի՛ք է հալածէք ժողովրդին», «ԱԼՄ-ն չե՛նք յանձնի» կարգախօսներով ու կոչերով Յունուար 7-ին Մատենադարանի մօտ հանրահաւաք անցկացրեց «ԱԼՄ հոլդինգ»-ի սեփականատէր Տիգրան Կարապետեանի գլխաւորած Ժողովրդական կուսակցութիւնը:*

*Հանրահաւաքը, դրա մասնակիցներից ոմանց բնորոշմամբ՝ անսպասելիօրէն բազմամարդ էր: Իր գոհունակութիւնը յայտնելով այդ կապակցութեամբ՝ Կարապետեանը ասաց. - «Մեղադրանքները, որ մեր շուրջը երկու պապիկ-տատիկ են կանգնած, ամբողջովին վարկաբեկում են ասողներին»:*

*Յունուարի 20-ից ԱԼՄ հեռուստաընկերութիւնը կ՚եթերազրկուի: Անցած տարուայ Դեկտեմբերի 16-ին Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձնաժողովի (ՀՌԱՀ) կայացրած որոշմամբ ԱԼՄ հեռուստաընկերութիւնը պարտուեց նոյն հեռարձակման յաճախականութեան համար յայտ ներկայացրած «Երեւան» հեռուստաընկերութեանը:*

*«Մենք ոչ թէ միայն մեր հանդէպ անարդարութեան դէմ ենք ըմբոստացել, այլ ընդհանուր անարդարութեան դէմ: Մենք ընդհանրապէս դարձնելու ենք դա կարգախօս եւ կամայականութեանը, անարդարութեանը պատերազմ ենք յայտարարելու», - հանրահաւաքից առաջ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասել էր Տիգրան Կարապետեանը:*

*ԱԼՄ-ի սեփականատէրը նշեց, որ որեւէ արդիւնք հանրահաւաքից չի ակնկալում, պարզապէս իրագործում են իրենց ժողովրդավարական իրաւունքները, իսկ անարդարութիւն ասելով՝ Տիգրան Կարապետեանի պարզաբանմամբ, Ժողովրդական կուսակցութիւնը միայն յաճախութիւնների համար ՀՌԱՀ-ի կազմակերպած մրցոյթը նկատի չունի:*

*Հանրահաւաքի իր ելոյթում Կարապետեանը շօշափելի տեղ էր յատկացրել սոցիալական հարցերին:*

*«Մենք ուզում ենք, որ չթալանեն ժողովրդին: Մենք ուզում ենք մի բան՝ որ մեզ հետ նստեն հաշուի», - ասաց նա:*

*Տիգրան Կարապետեանը տեղեկացրեց, որ Ժողովրդական կուսակցութեան յաջորդ, «աւելի հուժկու» հանրահաւաքը տեղի կ՚ունենայ Յունուարի 19-ին:*

# ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԻՆԵԱՆԸ ՀԱՅ ԱԶԱՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՌՑԱՆՑ ՄԻԱՒՈՐՈՒԵԼՈՒ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ



**ՀՀՇ նախկին անդամ Կարապետ Ռուբինեան**

*Ազգային ժողովի նախկին փոխնախագահ Կարապետ Ռուբինեանը հանդէս է եկել Առցանց ազատականների ալեանսի կամ ՅԱ-ի ստեղծման նախաձեռնութեամբ:*

*Ալեանսի նպատակը «համացանցի միջոցով Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի ազատականներին միաւորելն է եւ նրանց համատեղ առցանց գործունէութիւնը ծառայեցնելը՝ ի շահ երկրի ու ժողովրդի»:*

*Ռուբինեանն իր այս նախաձեռնութեան մասին հրապարակային յայտարարութեամբ հանդէս է եկել «Ֆէյսբուք» սոցիալական ցանցի իր էջում: Յայտարարութիւնում նա ասում է, որ տեղեկատուական տեխնոլոգիաների զարգացումը աննախադէպ հնարաւորութիւններ է ստեղծել ընդհանուր գաղափարների շուրջ մարդկանց միաւորուելու համար:*

*«Մեր հայրենիքի աննախանձելի վիճակը, որին բոլորս քաջ տեղեակ ենք, չընտրուած իշխանութիւնների անդադար ոտնձգութիւնները օրինականութեան ու մարդկանց հիմնարար ազատութիւնների հանդէպ, ինչպէս նաեւ օրըստօրէ բարդացող աշխարհաքաղաքական իրավիճակը ակտուալ են դարձրել մեր ազգի մտաւոր ներուժը համախմբելու միջոցով երկրի հետընթացը կասեցնելու եւ յեղափոխական բարեփոխումների միջոցով զարգացման ուղի դուրս գալու խնդիրը», - ասուած է Յունուար 10-ին «Ֆէյսբուք»-ում Ռուբինեանի տարածած յայտարարութեան մէջ:*

*Ըստ Ռուբինեանի, ազատականները ՅԱ-ում փորձելու են ոչ միայն քաղաքական գործունէութեան նոր ձեւեր կիրառել, այլեւ հայ հասարակութեան համար հիմնել ազատականութեան եւ ժողովրդավարութեան նոր աւանդոյթներ, այն է՝ գործունէութեան լիակատար թափանցիկութիւն, ֆինանսական լիակատար անկախութիւն, անդամների լիակատար հաւասարութիւն, ներքին կառավարման խորը ժողովրդավարացում ու ղեկավար մարմինների յաճախակի, մրցակցային ընտրութիւններ:*

*Նշենք, որ Ռուբինեանը «Ֆէյսբուք»-ում քաղաքական յայտարարութեամբ արդէն երկրորդ անգամ է հանդէս գալիս: Անցեալ տարուայ Յուլիսին Ռուբինեանը գրեց, թէ ընդդիմադիր Հայոց Համազգային Շարժում կուսակցութեան (ՀՀՇ) համագումարում կուսակցութեան վարչութեան անդամների ընտրութեան արդիւնքները կեղծուել են եւ յայտարարեց ՀՀՇ-ից հեռանալու մասին:*

# ԿՐԿԻՆ ՅԱՐՁԱԿՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՈՒԵԼ ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆ ԱՐՏԱԿ ԶԷՅՆԱԼԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԵՆԵԱԿԸ

*Յունուարի 10-ին յարձակման է ենթարկուել իրաւապաշտպան Արտակ Զէյնալեանի աշխատասենեակը: Այս կապակցութեամբ յայտարարութիւն են տարածել Հելսինքեան Ասոցիացիան եւ Հելսինքեան քաղաքացիական ասամբլիայի Վանաձորի գրասենեակը: Յայտարարութեան մէջ նշւում է.*

*«Վերջին 2 ամսուայ մէջ սա 2-րդ յարձակումն է իրաւապաշտպանի գրասենեակի վրայ: Այս պահի դրութեամբ իրաւապաշտպանի կողմից դեռեւս չի յայտնաբերուել որեւէ կորած իր աշխատասենեակից: Նախորդ անգամ՝ Դեկտեմբերի 6-ին, 2010թ. անյայտ անձինք ներխուժել էին գրասենեակ, կոտրել փաստաթղթերը պահելու համար նախատեսուած պահարանների դռների կողպէքները, տարել համակարգչի մոնիտորը եւ արբանեակային հեռուստաալիքների կոդազերծող սարքը: Իսկ գրասենեակում գտնուող գումարը «գողերը» չեն վերցրել: Դէպքի առթիւ յարուցուել էր քրէական գործ:*

*Հելսինքեան Ասոցիացիան համոզուած է, որ նախկինում կատարուած նմանատիպ դէպքը չի բացայայտւում ոստիկանութեան անգործութեան պատճառով եւ վստահ է, որ այս վերջին նմանատիպ դէպքն էլ չի բացայայտուելու: Հելսինքեան Ասոցիացիան յայտարարում է, որ վերոյիշեալ յարձակումները իշխանութեան պատուէրն է, որն ուղղուած է միմիայն Արտակ Զէյնալեանի իրաւապաշտպան գործունէութեան դէմ: Այս տեսակ քայլերը նպատակ են հետապնդում խոչընդոտել իրաւապաշտպանի գործունէութեանը:*

*Արտակ Զէյնալեանը հանդիսանում է «Իրաւաբաններն ընդդէմ բռնութիւնների» հասարակական կազմակերպութեան համակարգող, «Մարտի 1»-ի գործով Յատուկ քննչական ծառայութեան անգործութիւնը դատական կարգով վիճարկող իրաւայաջորդների, ինչպէս նաեւ 2010թ. Ապրիլի 13-ին Զարենցաւանի ոստիկանական բաժանմունքում մահացած Վահան Խալաֆեանի գործով տուժողի իրաւայաջորդի ներկայացուցիչ: Ա. Զէյնալեանը Մարդու իրաւունքների Եւրոպական դատարանում ներկայացրել է մի շարք գործեր, այդ թւում նաեւ՝ Մելտեքս ՍՊԸ եւ Մ. Մովսէսեանը ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան գործը «Ա1+» հեռուստաընկերութեան վերաբերեալ»:*

# ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԱԾ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶԲՕՍԱՇՐՋԻԿ ՄԻՋԻՆԸ ԾԱԽՍՈՒՄ Է 1400 ԴՈԼԱՐ

*Զբօսաշրջային փաթեթով Հայաստան այցելած մէկ զբօսաշրջիկը այցելութեան ընթացքում Հայաստանում ծախսում է միջինը 500 հազ. դրամ կամ 1400 դոլար (առանց ավիատոմսի արժէքի): Այդ մասին նշուած է զբօսաշրջութեան զարգացման 2011 թ. ծրագրում, որը էկոնոմիկայի նախարարութիւնը ներկայացրել է կառավարութեան հաստատմանը:*

*Ծրագրի իրականացման արդիւնքում սպասւում է, որ 2011 թ. Հայաստան կ՚այցելեն մօտ 700 հազ. զբօսաշրջիկներ: Ըստ որոշ նախնական տուեալների՝ 2010 թ. Հայաստան այցելած զբօսաշրջիկների թիւը գերազանցել է 600 հազարը: Սակայն նրանց փոքր մասն է այցելում տուրգործակալութիւնների փաթեթներով:*

*Առայժմ պաշտօնական վիճակագրութիւն չկայ, թէ քանի զբօսաշրջիկ է Հայաստան այցելում տուրփաթեթներով: Ըստ մեր գնահատականների՝ խօսք է գնում 50-100 հազ. հոգու մասին:*

# «ԱՌԱՒՕՏ». ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ Է

*«Առաւօտ»-ը զրուցել է Երեւանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նաւասարդեանի հետ՝ Հայաստանում ինտերնետային հեռարձակման հնարաւոր սահմանափակման վերաբերեալ:*

*«Կարող ենք սպասել, որ այդպիսի քայլ լինի, - պատասխանել է Նաւասարդեանը: -Մանաւանդ որ՝ ինտերնետը զարգանում է, եւ աւելանում է ինտերնետով հեռարձակում իրականացնելու եւ քաղաքացիների կողմից այն դիտելու հնարաւորութիւնը: Մօտենում է ընտրութիւնների հերթական փուլը, եւ պարզ է, որ այս պայմաններում կարելի է սպասել այդպիսի փորձերի: Եվ հենց այդ պատճառով շատ կարեւոր է՝ ինչքան հնարաւոր է արագ յստակեցնել Հայաստանի օրէնսդրութիւնը: Դրա համար կայ լուծում՝ ցանկացած հեռարձակում, այդ թւում՝ ինտերնետային, պիտի թոյլատրուի արտօնագրման պարզ ընթացակարգով: Ես կողմնակից եմ, որ այդ կարգի հեռարձակումն ընդհանրապէս չդառնայ արտօնագրման առարկայ»:*

## ԼՈՒՐԵՐ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԴԷՊՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՕՐԱՄԱՍԵՐԷՆ ՄԷԿՈՒՆ ՄԷՋ

### ԵՆԳԻԲԱՐԵԱՆԸ ՄԱՀԱՑԵԼ Է, ԿԱՐԱՊԵՏԵԱՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ Է

*Տաւուշի մարզի զօրամասերից մէկում Դեկտեմբերի 31-ի ուշ երեկոյեան տեղի ունեցած միջադէպի հետեւանքով ծանր վնասուածքներ ստացած 20-ամեայ Տարօն Ենգիբարեանը Յունուար 10-ին մահացել է: Զօրամասի՝ արդէն նախկին հրամանատար, գնդապետ Սերգէյ Կարապետեանը ձերբակալուած է, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին տեղեկացրեցին պաշտպանութեան նախարարութեան քննչական ծառայութիւնից:*

*Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի հրամանագրով Սերգէյ Կարապետեանն ու զօրամասի հրամանատարական կազմի եւս երկու սպաներ նոյն օրը ազատուել են զբաղեցրած պաշտօններից:*

*Տարօն Ենգիբարեանը շուրջ 10 օր անգիտակից վիճակում պառկած էր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում:*

*Դէպքը տեղի էր ունեցել Դեկտեմբերի 31-ի ուշ երեկոյեան, հրամանատար Կարապետեանի եւ Տաւուշի մարզի Գետահովիտ գիւղի բնակիչ մի քանի երիտասարդների միջեւ, որոնց հետ նաեւ Տարօնն էր եղել: Երիտասարդները գնացել են զօրամաս՝ իրենց ծանօթներից մէկին տեսնելու: Սերգէյ Կարապետեանը նրանց նկատել է զօրամասի անցագրային մուտքի մօտ եւ մահացածի հարազատների փոխանցմամբ՝ հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղացել: Ծագել է վիճաբանութիւն, ծեծկռտուք եւ երբ տղաները նստել են մեքենան եւ փորձել են հեռանալ, հրամանատարը՝ Սերգէյ Կարապետեանը, կրակել է մեքենային, այնուհետեւ պահանջել է նրանց բերել զօրամասի շէնքի երկրորդ յարկում տեղակայուած իր սենեակ: Մահացածի հարազատների տեղեկութիւններով, երբ նա սկսել է կրակահերթ արձակել սենեակի պատերին, երիտասարդները վախից փորձել են երկրորդ յարկից թռչելով փախչել, ինչի հետեւանքով Տարօն Ենգիբարեանը ստացել է ծանր գանգուղեղային ցնցում: Երեւանի «Գրիգոր Լուսաւորիչ» բժշկական կենտրոնի Շտապ օգնութեան եւ վերակենդանացման բաժանմունքի վարիչ Գագիկ Մանուկեանից փոխանցմամբ, երիտասարդը մահացել է առանց գիտակցութեան գալու:*

*Տարօն Ենգիբարեանը մի քանի շաբաթ առաջ էր աւարտել զինուորական ծառայութիւնը: Պապի՝ Գրիգոր Ենգիբարեանի փոխանցմամբ, երիտասարդը պատրաստւում էր շարունակել ուսումը: Իջեւանի զօրամասի հրամանատարին Տարօնի պապը հարցնում է՝ եթէ տղաները օրէնք էին խախտել, թող ոստիկան կանչէր, ինչո՞ւ էր որոշել անձամբ պատժել երիտասարդներին:*

*Իրաւապաշտպան Արթուր Սաքունցը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նոյն հարցը բարձրացրեց:*

*«Տեղի ունի իշխանութեան չարաշահում, իշխանութեան գերազանցում եւ զէնքի ապօրինի օգտագործում: Նախ, առաջին հերթին՝ ինչպէ՞ս են այդ քաղաքացիական անձինք յայտնւում այդ բարձրաստիճան սպայի աշխատասենեակում: Եւ յետոյ՝ որտեղից է այդ պահին աւտոմատ հրազէնը յայտնւում սպայի ձեռքին: Սա շատ տիպիկ մոդելային օրինակ է, երբ որ զէնքով մարդը իր լիազօրութիւնները եւ իր պաշտօնը օգտագործում է, հրազէնի կիրառմամբ, քաղաքացիական անձանց նկատմամբ այն այդ դէպքում, երբ դա ոչ պատերազմական գործողութիւն է, ոչ յարձակման կասեցման իրավիճակ: Մոդել՝ որը ինչ-որ խնդիրների լուծման համար դառել է օրինաչափ մեր երկրում: Այսինքն՝ մեր մօտ հրացանաւոր մարդը ամէն ինչ որոշող է», - ասում է իրաւապաշտպանը:*

## ՕՀԱՆ ԴՈՒՐԵԱՆ

*Շարունակուածէջ 1-էն*

*երաժշտութիւնն ու հայ դիրիժորական արուեստը», - ըսած է Հէքէքեան:*

*Վերջին տարիներուն Օհան Դուրեան հրապարակային ելոյթներով բազմիցս իր աջակցութիւնը յայտնած է ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսին, որու համակարգող Լեւոն Զուրաբեան ըսած է, թէ մաեստրոն հեռացաւ վիրաւորուած:*

*«Մեծ մարդիկ ընդհանրապէս ոչնչով կախուած չեն լինում օրուայ իշխանութիւններից եւ իսկապէս կարողանում են իրենց ձայնը բարձրացնել նաեւ յանուն ազգի, յանուն հասարակութեան, յանուն քաղաքացիական ազատութիւնների, ինչը որ նա միշտ անում էր մինչեւ վերջ՝ սկզբունքայնօրէն: Այս իշխանութիւնները այնքան մանրախնդիր են իրենց մտածելակերպով, որ փաստօրէն մինչեւ վերջ ամէն ինչ անում էին, որ նրա համար պրոբլեմներ ստեղծէին, որեւէ հարցում ընդառաջ չէին գնում, փորձում էին ըստ էութեան վրէժխնդիր լինել իր քաղաքական հայեացքների համար», - ըսած է Զուրաբեան:*

*Սակայն Հայաստանի ժողովրդական արտիստ Ռուբէն Մաթեւոսեան համաձայն չէր, թէ Օհան Դուրեան գնահատուած չէր կենդանութեան օրօք: Երգիչի խօսքով՝ Դուրեանի մարդկային տեսակը պէտք չէ կապել նրա արուեստի հետ:*

*«Ինքը անհանդուրժողական խառնուածք ունէր, եւ դա երբեք չի կարելի նոյնացնել նրա երաժշտական ունակութեան հետ: Որ մեծութիւն էր, անվիճելի է, իսկ գնահատո՞ւմ են, թէ ոչ, ինչպէ՞ս չէ: Հայաստանի կառավարութիւնը չէր մի՞թէ, որ որոշեց, որ նա մեր մեծերի պանթէոնում պէտք է վերջնական հանգիստը ունենայ: Նշանակում է՝ յարգուած էր եւ պաշտուած», - ասած է Ռուբէն Մաթեւոսեան:*

*Դերասան Ազատ Գասպարեան ըսած, թէ եկած է հրաժեշտ տալու իր ամենասիրած երաժիշտներէն մէկուն: «Այսօր շատ մեծ արուեստագէտ է գնում մեզանից, շատ մեծ երաժիշտ, եւ բոլորս գիտենք՝ եթէ մաեստրոն գերմանացի լինէր, այսօր ամբողջ աշխարհի երաժշտական աշխարհը կը լինէր սգի մէջ: Մենք բաւարարւում ենք մեզնով: Մէկ թէ երկու տարի առաջ, երբ մի քիչ տկար էր, ասացին, որ կը գնայ, ասաց՝ չէ, ես իմ հայրենիքում պիտի մեռնեմ», - ըսած է Գասպարեան:*

*Օհան Դուրեանի մարմինը տեղափոխուեցաւ Կոմիտասի անուան պանթէոն, ուր հողին յանձնուեցաւ միւս մեծերու՝ Էդուարդ Իսաբէկեանի, Գոհար Գասպարեանի եւ Սիլվա Կապուտիկեանի կողքին:*

## ԹՈՒՐՔ ԹԵԿՆԱԾՈՒՆ, ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ, ՅԱՂԹԵԼ Է ՀԱՅ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ

*Գերմանիոյ Համբուրգ քաղաքի ձախակողմեան կուսակցութեան ընտրացուցակում տեղ զբաղեցնելու համար պայքարում թուրք թեկնածուն յաղթել է հայ թեկնածուին՝ ճանաչելով Հայոց Ցեղասպանութիւնը, յայտնում է Sabah.de-ն:*

*Համբուրգի ձախակողմեան կուսակցութեան ընտրացուցակում ազգութեամբ թուրք Մեհմեթ Եըլդըզն ընդգրկուել է այն բանից յետոյ, երբ հայազգի թեկնածու Թորոս Սարեանի Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչել-չճանաչելու վերաբերեալ հարցին պատասխանել է, որ «Օսմանեան կայսրութիւնում 1915 թ.-ի հայերի դէմ ցեղասպանութիւն է իրականացուել»: «Թուրքիան պէտք է օրինակ վերցնի Գերմանիայից, որը Երկրորդ Աշխարհամարտի ժամանակ գործած իր մեղքերն ընդունել է եւ սկսել է փոխհատուցում վճարել հրեաներին»: Կուսակցութիւնում սա համարել են վճռորոշ քայլ թուրք թեկնածուին ընտրացուցակներում ընդգրկելու համար, իսկ հարցադրում կատարած հայազգի թեկնածուն դուրս է մնացել պայքարից:*

*Ընդհանուր առմամբ Փետրուարի 20-ին կայանալիք Համբուրգի նահանգի խորհրդարանական ընտրութիւնների համար Համբուրգի ձախակողմեան կուսակցութեան ընտրացուցակում տեղ է գտել ազգութեամբ թուրք 3 թեկնածու, փոխանցում է HamburgHaber-ը:*

*HayNews.am*

## ԷՐՏՈՂԱՆ ՄԻՋԱՄՏԱԾ Է

*Շարունակուածէջ 1-էն*

*ղեկացնէ, որ Էրտողան իր որոշումը պատճառաբանած է արձանի գեղարուեստական ցած մակարդակով:*

*«Այլանդակութիւն տեղադրուած է: Անկարելի է մտածել, որ արուեստի գործերու կողքին կրնան նման բաներ ըլլալ», - ըսած է Թուրքիոյ վարչապետը:*

*The Wall Street Journal-ը կը գրէ, որ Էրտողանի որոշումը կը գործադրուի Յունիսին տեղի ունենալիք ընտրութիւններէն առաջ, տեղական քաղաքականութեան վրայ դրական ազդեցութիւն գործելու նպատակով:*

*Թուրքիոյ գլխաւոր ընդդիմադիր՝ Հանրապետական Ժողովրդական կուսակցութիւնը անմիջապէս արձագանքած է Էրտողանի որոշումին: Կուսակցութեան անդամ, խորհրդարանի պատգամաւոր, Թուրքիոյ մշակոյթի նախկին նախարար Էրքան Քարաքաս ըսած է, թէ արձանը տգեղ չէ եւ ոչ ալ տարօրինակ է:*

*Նախկին նախարարի բնորոշումով՝ «արձանը բարձրակարգ արուեստ է ու հակաթոյն է ցեղասպանութեան յուշարձաններու դէմ, որոնք կան Հայաստանի եւ Թուրքիոյ մէջ»: Ան Էրտողանին կոչ ըրած է վերատեսութեան ենթարկելու իր որոշումը:*

*Արձանը կառուցուած է 2008 թուականին Կարսի նախկին քաղաքապետին կողմէ: Այն քաղաքի բլուրներէն մէկուն վրայ է եւ 30 մեթր բարձրութիւն ունի:*

*The Wall Street Journal կը գրէ, որ արձանը առաջին օրէն վիճայարոյց եղած էր: Ազգայնականները եւ քաղաքի 20 տոկոսը կազմող ատրպէյճանցիները դիմած էին մշակոյթի նախարարութեան, արգիլելու համար արձանի կառուցումը:*

## ԹՐՔԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

*Շարունակուածէջ 1-էն*

*«Այդ լուրը ուղարկուած է Դեկտեմբեր 22-էն անմիջապէս յետոյ, այսինքն՝ այն բանէն յետոյ, երբ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւին ընդգրկումը ԱՄՆ Գոնկրէսի Ներկայացուցիչներու պալատի լիագումար նիստին ձախողեցաւ: Այդ ուղերձներու մասին թուրք դեսպանները իրազեկած են այն երկիրներու իշխանութիւններուն, ուր հաւատարմագրուած են եւ պահանջած՝ մեծցնել թրքական դիւանագիտական ներկայացուցչութիւններուն անվտանգութեան ապահովման ուղղուած քայլերը: Իսկ Անգարայի մէջ դեսպաններու համաժողովի ծիրէն ներս տեղի ունեցած անվտանգութեան նիստի ժամանակ, որուն կը մասնակցէր նաեւ MIT-ի ղեկավար Հաքան Ֆիտան, քննարկուած է նաեւ այդ թեման»,- կը գրէ Ուլթքու Զաքըրոզեր:*

*Ընդգծելով, որ հայկական Սփիւռքը հսկայական պիւտճէով շատ լուրջ պատրաստական աշխատանքներ կ'իրականացնէ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ, թուրք յօդուածագիրը կը նշէ, որ թեմային առնչութեամբ «Անգարայի գլուխը բաւական» խառն է եւ թրքական իշխանութիւնները Հայոց Ցեղասպանութեան դէմ պայքարի հարցով յստակ հակաքայլեր առայժմ չեն մշակած:*

*«Անգարայի մէջ դեսպաններու համաժողովի ժամանակ քննարկուեցան Թուրքիոյ կողմէ հայկական ծրագիրները ձախողցնելու ուղղութեամբ իրականացուելիք շարք մը քայլեր: Սակայն դժուար է ըսել, որ այդ համաժողովի ծիրէն ներս թեմային առնչութեամբ կայացաւ յստակ որոշում: Առաջարկներ եղան, որպէսզի Թուրքիան անցնի հակագրոհի եւ 1915-ի իրադարձութիւններուն առնչութեամբ նոյնպէս շարժանկար նկարահանէ: Համաժողովի ընթացքին բաւական շատ անդրադարձ եղաւ նաեւ Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին»:*

*«Մեծ թիւով թուրք դեսպաններ կը պահանջէին, որպէսզի չեղեալ յայտարարուին Հայաստանի հետ ստորագրուած Արձանագրութիւնները: Որոշ դեսպաններ ալ կ'առաջարկէին, որ Անգարան հանդէս գայ աւելի կոշտ դիրքերէ՝ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին դէմ եւ յստակ նախազգուշացումներ ընէ»,- կը գրէ թուրք յօդուածագիրը, ընդգծելով, որ Հայոց Ցեղասպանութեան թեման, մինչեւ 2015՝ պիտի շարունակէ մնալ Անգարայի օրակարգային հարցերէն մէկը:*

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԵԼ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԻՆ ԳԻՆՈՒ ՀՆՁԱՆԸ



Արենի գիւղի մօտակայքի նոյն այն քարանձաւում, որտեղից բոլորովին վերջերս յայտնաբերուել էր աշխարհի ամենահին՝ 5,500 տարուայ հնութիւն ունեցող կաշուէ կօշիկը, հնաբանները յայտնաբերել են խաղողի տրորման, խմորման եւ պահպանման համար նախատեսուած կաւէ տարաներ, բաժակներ եւ խաղողի կորիզներ, ինչն ապացուցում է, որ Հայաստանում գինի են պատրաստել աւելի քան 6000 տարի առաջ:

Ուսումնասիրութիւններն անցկացուել են հայ, ամերիկացի եւ իռլանտացի գիտնականների խմբի կողմից: Հնագիտական միջազգային արշաւախմբի ղեկավար եւ հայկական կողմի պատասխանատու Բորիս Գասպարեանի խօսքով, սա աշխարհի ամենահին գինու հնձանն է:

«Հնագիտական տուեալները համալիր կերպով յուշում են, որ այդտեղ հաստատապէս գինի են արտադրել 6000 տարի առաջ», - Երեքշաբթի օրը «Ազատութիւն» ռատիոկայանին տուած հարցազրոյցում ասաց գիտնականը:

Բորիս Գասպարեանն ասում է, որ հնձանի շրջակայ տարածքում յայտնաբերուել են նաեւ դիակների մասունքներ:

«Այդտեղ նպատակը ոչ թէ եղել է գինի պատրաստելը եւ պահեստաւորելը, այլ պատրաստուած գինին ուղղակի թաղման ծէսում օգտագործելը, որովհետեւ դարեր շարունակ միշտ մահացածների հետ գինի են դրել», - նշեց նա:

Յայտնաբերուած խաղողի կորիզները այժմ գտնւում են ԴՆԹ հետազօտութեան փուլում՝ պարզելու, թէ խաղողի ի՞նչ տեսակից է պատրաստուել գինին, արդեօ՞ք այդ տեսակները կապուած են այսօր այդ տարածաշրջանում աճեցուող աւանդական տեսակների հետ, թէ ոչ:

«Կորիզների նախնական դիտարկումը ցոյց է տալիս, որ 6000 տարի առաջ արդէն մենք ունենք մշակովի խաղող», - նշեց նա:

Հայաստանի գինեգործների միութեան նախագահ Աւագ Յարութիւնեանը կարեւորում է այս իրադարձութիւնը, ասում է, որ սրանից պէտք է Հայաստանում կարողանան օգտուել խաղողագործութեան եւ գինեգործութեան զարգացման առումով:

«Հայկական գինիները շատ հեշտութեամբ կը մտնեն միջազգային շուկայ: Մենք ունենք խաղաքարտեր, յուսանք՝ կառավարութիւնը կը կանգնի մեր կողքին», - ասում է գինեգործների միութեան նախագահը:

## ԼԻԲԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀՐԱԺԱՐԵՑԱՆ
### ՕՊԱՄԱ-ՀԱՐԻՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՋ



Չորեքշաբթի, Յունուար 12-ին Լիբանանի կառավարութեան մաս կազմող ընդդիմադիր նախարարները հաւաքական հրաժարական ներկայացուցին, տապալելով վարչապետ Սաատ Հարիրիի գլխաւորած կառավարութիւնը: Իրենց այս քայլով Հըզպալլա ու իր համակիրները կանխեցին Հարիրիի նոյն օրը ունենալիք հանդիպումը Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի հետ: Սպիտակ Տան մէջ կայացած հանդիպումի ընթացքին Օպամա գնահատեց Հարիրիի վարած քաղաքականութիւնը, միաժամանակ յայտնելով Միացեալ Նահանգներու զօրակցութիւնը ՄԱԿ-ի Միջազգային Դատարանին, որ կը քննէ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութեան հարցը:

Հըզպալլա կուսակցութեան համակիր Միշէլ Աուն օր մը առաջ նշած էր որ Սուրիական եւ Սէուտական ճիգերն ի դերեւ ելած են պատշաճ լուծում մը տալու այն քաղաքական տագնապին որ սկսաւ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի սպանութեամբ:

Մամլոյ ասուլիս մը սարքելով Աուն յայտարարեց թէ «Սէուտա-սուրիական նախաձեռնութիւնը վերջ գտած է առանց դրական արդիւնքի: Վարչապետ Հարիրի ցարդ չէ պատասխանած այս կապակցութեամբ եղած ճիգերուն»:

Արդարեւ, վերոյիշեալ հաղորդագրութիւնը կատարուեցաւ նախկին վարչապետի գալկին Նիւ Եորքի մէջ՝ Լիբանանի կացութեան կապակցութեամբ Ապտուլլա Թագաւորի, Հիլարի Գլինթընի, Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիի եւ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պան Քի Մունի հետ ունեցած խօսակցութիւններէն ետք:

Նշենք նաեւ որ ամիսներէ ի վեր, Լիբանան քաղաքական ճգնաժամային օրեր կ'ապրի ՄԱԿ-ի հովանաւորութիւնը վայելող Լիբանանի հարցով զբաղող մասնաւոր դատական ատեանի կողմէ առնուելիք վճիռի կապակ-ցութեամբ:

Միւս կողմէ այժմու վարչապետ Սաատ Հարիրի, Լիբանանի մէջ քաղաքական մեծ ճնշումներու ենթակայ է, միջազգային ատեանի դատավճիռի պատճառով: Սուրիոյ եւ Իրանի աջակցութիւնը վայելող Հըզպալլա կուսակցութեան պահանջն է որ Հարիրի դատապարտէ դատավճիռը: Կ'ենթադրուի որ միջազգային ատեանը իր դատավճիռին մէջ պիտի ամբաստանէ Լիբանանի շիիթ համայնքի զինեալներու Հըզպալլահ կազմակերպութեան անդամները: Իսկ Հըզպալլան բացարձակապէս չընդունիր վերոյիշեալ հարցին մէջ իր մասնակից ըլլալը:

## ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՅՈՅՍ Է ՅԱՅՏՆԵԼ ՈՐ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԿԸ ՅԱՂԹԱՀԱՐՈՒԻՆ



Յունուարի 10-ին Վրաստանի հայ համայնքի ներկայացուցիչները՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի եւ Վրաստանում Հ.Հ. արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Հրաչ Սիլվանեանի գլխաւորութեամբ այցելել են Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարան, ուր նրանց դիմաւորել է Վրաց Եկեղեցու միջեկեղեցական յարաբերութիւնների պատասխանատու Գերասիմ միտրոպոլիտը եւ ուղեկցել Պատրիարքի պաշտօնական ընդունարան:

Ինչպես NEWS.am-ը տեղե-

Շար.ը էջ 16

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

---

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**
**Name: ----------------------------------------**
**Address: ----------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: -------------**
**Tel :----------------------- Fax : -------------------------**

# «ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՈՐՈՒՍՏՆ Է» Կ'ԸՍԷ ԸՆԿԵՐ ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ

*HayNews.am-ի հարցազրոյցը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեանի հետ:*

- Ինչպէ՞ս էք գնահատում անցնող տարին: Եթէ փորձենք կարճ ամփոփել՝ ի՞նչ ձեռքբերումներ եւ բացթողումներ ունեցանք:

*- Իսկ ու՞ր էինք ուզում հասնել: Հայաստանը, առ այսօր, չունի զարգացման նախանշուած ուղի եւ գնահատել ձեռքբերումներն ու բացթողումները հնարաւոր չի: Այո, Հայաստանը գտնւում է աշխարհաքաղաքական զարգացումների խիստ զգայուն գօտում, որտեղ խաչւում են գերտէրութիւնների ազգային եւ ռազմավարական շահերը: Ըստ ամենայնի, սա է պատճառը որ Հայաստանի իշխանութիւնները, պահպանելով իրենց համար ազատ մանեւրելու դաշտ, 20 տարի է խուսափում են ընտրել հայ ազգային շահերի եւ նպատակների իրականացմանն ուղղուած երկարամեայ ուղեգիծ-ծրագիր: Սակայն, Հայաստանի 20-ամեայ պատմութեան քաղաքա-տնտեսական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ այդ մարտավարութիւնը սխալ է եւ դրա շարունակումը բերելու է յաջորդական անդարձելի կորուստներ: Այնուամենայնիւ, պէտք է դրական գնահատել 2010-ին հայ-թուրքական սահմանի փակ մնալն ու Մադրիդեան սկզբունքների գործնական չկիրառումը: Բացթողումների շարքում ամենակարեւորը ժամանակի կորուստն է: Այսօր կարելի է փաստել, որ Հայաստանը կորցրել է կտրուկ եւ կայուն զարգացում ապահովելու, համահայկական միասնութիւն ստեղծելու համար առաւել քան բաւարար 15 տարի:*

- Ինչպէ՞ս կը գնահատէք Հայաստանի քաղաքական վիճակը: Կարողանո՞ւմ է իշխանութիւնը կատարել այն խոստումները, որոնք տուեցին նախընտրական շրջանում:

*- Անցեալ 20 տարիներին մենք չենք լսել եւ տեսել ոչ մի հաշուետուութիւն նախընտրական ծրագրերի կատարման մասին, լինի դա կուսակցութեան, ընտրովի մարմնի, թէ անհատի:*

*Քանի դեռ չկայ Հայաստանի Ազգային Զարգացման Ծրագիրը, բոլոր ծրագրերը նեղ նպատակային, հատուածային են ու լինելու են այդպիսին:*

*Քաղաքական իրավիճակը գնահատւում է կայունութեան աստիճանով, իսկ կայունութեան ցուցանիշներն են.*

*1. օրէնքի գերակայութիւն*

*2. սոցիալական արդարութիւն*

*3. արժանապատուօրէն ապրելու հնարաւորութիւն:*



*Սրանց բացակայութիւնը ստեղծում է սոցիալական ընդվզումների, աղքատութեան, անարդարութեան, արտագաղթի մշտական միջավայր: Սա է Քոչարեանական «ազգային բուրժուազիայի» ստեղծման, իսկ իրականում՝ հակազարգացման տասնամեակի արդիւնքը, ինչը եւ ունի իր իներցիոն շարունակումը այսօր:*

- Իսկ այդ իներցիան ինքնստինքեա՞ն է դադարելու:

*- Ի հարկէ ոչ: Այն հիմնուած է անձնական շահի վրայ: Իսկ անձնական շահը համախմբող եւ ինքնապաշտպանուող կատեգորիա է: Այստեղ անհրաժեշտ է խիրուրգիական միջամտութիւն, ի հարկէ, եթէ հետապնդւում է միջավայրի առողջացման նպատակ:*

- Իսկ դուք տեսնու՞մ էք այդպիսի միտում:

*- Մասամբ: Արտաքին քաղաքականութիւնում դա աւելի է արտայայտուած: Ռուսաստանի հետ յարաբերութիւնների խորացում, փոխվստահութեան դաշտի լիարժէք վերականգնմանը միտուած քայլեր, Արցախի հարցում դիրքորոշման կոշտացում, համահայկական խնդիրների բարձրաձայնում: Այլ իրավիճակ է ներքին դաշտում: Տարիների ընթացքում ձեւաւորուած օլիգարխիկ համակարգը պայքարելու է իր գոյութեան համար:*

- Որո՞նք են օլիգարխիկ համակարգի ուղղակի վնասները Հայաստանին:

*- Հանրայայտ ու անվիճելի է, որ փողը ոչ միայն հոտ, այլեւ հայրենիք չունի: Իսկ փողատէրը հայրենիք ունի՞: Ի հարկէ, կան բացառութիւններ: Բայց դրանք ընդօրինակում չեն ստանում:*

*Եթէ դրամի կուտակումը դարձել է նպատակ եւ դաւանանք, ապա Հայրենիք հասկացողութիւնը դառնում է տասներորդական:*

*Եթէ դրամի ներդրումը Դուբայում, Իսպանիայում, Զիմբաբուէում, Թուրքիայում եւ այլուր լինում է աւելի շահութաբեր, ապա այդ երկրների զարգացմանն էլ նա կը ծառայի: Նման օլիգարխը դադարում է տեսնել, հասկանալ ու սրտացաւ լինել սեփական ժողովրդի գրկանքներին, կարիքներին, ցաւերին: Աւելին՝ նա արհամարհում եւ ծաղրում է ընչազուրկ մասսային, մոռանալով, որ նրանք յայտնուել են տուեալ վիճակում նաեւ իր պատճառով: Միայն դրամի առկայութիւնը բաւարար պայման չի օլիգարխիկ համակարգի գոյութեան պահպանման համար: Նա պէտք է ունենայ լրջագոյն լծակներ իշխանութեան եւ բանկային համակարգի ներսում, ինչին մենք վկայ ենք երկար տարիներ:*

*Իսկ դա նշանակում է կոռուպցիայի, կաշառակերութեան, օրէնքի ընտրովի կիրառման կայուն դաշտի ձեւաւորում: Դա նշանակում է դրամական հոսքերի ուղորդում դէպի անձնական շահերի դաշտ: Սա է Հայաստանի շարունակական քայքայման հիմնական պատճառներից մէկը:*

- Հայաստանի սոցիալական վիճակ՝ գազի գնի թանկացում, գնաճ, դէպի ու՞ր ենք գնում:

*- Եթէ այսպէս շարունակուի, գնում ենք դէպի ամայացում, թուլացում եւ արտագաղթ: Սոցիալական ոլորտը Հայաստանում եղել եւ մնում է ամենաձախողուածը: Գերլիբերալիզացուած համակարգը ազատել է պետութեանը սոցիալական ոլորտի մի շարք հիմնահարցերում պատասխանատուութիւն կրելուց, թողնելով դրանք «ինքնակառավարուող» շուկային: Հետեւանքները պարտադրում են վերանայել այդ մօտեցումը, կտրուկ բարձրացնել պետութեան կարգաւորիչ դերը սոցիալական եւ տնտեսական ոլորտներում, խստագոյն հսկողութեան տակ դնել գնագոյացման գործընթացը: Հայաստանում, առաջին անհրաժեշտութեան շատ ապրանքներ եւ ծառայութիւններ ունեն գների իջեցման ռեալ հնարաւորութիւն, շարունակելով մնալ շահութաբեր, բայց ոչ գերշահութաբեր: Հարկահանութեան դաշտի ընդլայնումը, խորացումը եւ ինտենսիւացումը կարճաժամկէտ հատուածում համալրելով բիւջէն, քայքայում է տնտեսական զարգացման եւ սոցիալական կայունացման հիմքերը ու հասունացնում առաւել ծանր ճգնաժամային իրավիճակ:*

- Յատուկ գիւղատնտեսութեան մասին: Ինչ՞ն է ըստ ձեզ այս ապիկար վիճակի պատճառը:

*- Գիւղատնտեսական քաղաքականութեան իսպառ բացակայութիւնը եւ անսրտացաւ վերաբերմունքը: Ազգային վիճակագրական ծառայութիւնը 2009 թ. տարեգրքում նշում է.- «խոտհարքի տակ զբաղեցուած վարելահող- 108 հազ. հա»:*

*Ինքնասպանութիւն է: Գերսակաւահող Հայաստանը վարելահողի 30 տոկոսը խոպան է դարձրել: Սրա համար պատասխանատու 2-3 տասնեակ պաշտօնեաներ պէտք է ցմահ դատապարտուէին: Գիւղատնտեսութիւնը պէտք է վերածուի ժամանակակից ագրո-արդիւնաբերական համալիրի, ներքին խորը կօօպերացիայի հաստատումով: Հայաստանի հողը բաւարար է ժողովրդին սնելու եւ վերամշակուած ու բացառիկ որակի արտադրանք արտահանելու համար: Բուսական, վերականգնուող էներգետիկ հնարաւորութիւնների օգտագործումը կարող է որոշակիօրէն նուազեցնել էներգետիկ կախուածութիւնը արտաքին աշխարհից եւ լրջօրէն բարելաւել պարէնային անվտանգութեան աստիճանը: Սակայն, գիւղի, գիւղացու, հողի նկատմամբ երկարամեայ անտարբեր, անպատասխանատու վերաբերմունքը յանգեցրել է գիւղի ամայացմանը եւ գիւղացիների մասսայական արտագաղթին:*

- Լեռնային Ղարաբաղի խնդիր: Ինչպիսի՞ վիճակ ունենք, եւ ի՞նչ կարելի է սպասել յառաջիկայում:

*- Այստեղ ունենք ուրախացնող որոշ երեւոյթներ: Արցախի ժողովուրդը դարձել է աւելի ինքնավստահ ու կազմակերպուած:*

*Յառաջընթաց է ապրում նաեւ տնտեսական զարգացման ոլորտը: Հակամարտութեան կարգաւորման նկատմամբ Հայաստանի իշխանութիւնը առայժմ ցուցաբերում է առաւել կշռադատուած եւ ազգային մօտեցում քան 97-ից ի վեր:*

*Սակայն, Արցախեան յաղթա-*

Շար.ը էջ 18



# ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍԻ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ



*Առաջին անգամը չէ որ Լոս Անճելըսի Հայաստանի Գլխաւոր Հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեան դէմ յանդիման կու գայ գաղութիս մամլոյ եւ հեռուստատեսիլի ներկայացուցիչներու հետ՝ անոնց տեղեկութիւններ փոխանցելու համար հիւպատոսարանի կողմէ ընձեռուած նախաձեռնութիւններու, մշակած ծրագիրներու եւ այլ ընթացիկ ընդհանրական բնոյթի հարցերու մասին:*

*Մամլոյ տրուած այս անգամուան հրաւէրը՝ տարբեր էր իր բնոյթով, որ արժանի էր ուշադրութեան: Ասուլիսը տեղի կ'ունենար Կլենտէյլ,հիւպատոսութեան շէնքէն ներս, 2010-ի Դեկտեմբեր 29-ին. մամլոյ ներկայացուցիչներու հետ, «ասուլիսի շրջանակին մէջ ամփոփելու համար «աւագ հիւպատոսութեան գործունէութիւնը, անցնող տարուան ընթացքին», ինչպէս գրուած էր տրուած հրաւիրագրին մէջ:*

*Արդարեւ, մեծարգոյ աւագ հիւպատոսը սպառիչ կերպով ներկայացուց հիւպատոսութեան միամեայ գործունէութիւնը: Ան, նախ դիտել տուաւ, թէ տարի մը ու կէս առաջ, կարելի դարձած է հիւպատոսարանը փոխադրել իրարու մօտ գտնուող հայահոծ քաղաքներու կեդրոնը նկատուած Կլենտէյլ քաղաք: Շնորհիւ այս մօտեցման, բազմապատկուած է հիւպատոսարան այցելող հայորդիներու թիւը, եւ դիւրացած՝ անոնց մատուցուած անցագրային եւ այլ բնոյթի քաղաքացիական ծառայութիւնները: Նաեւ, ան, յականէ անուանէ ներկայացուց իր գլխաւորած անձնակազմի անդամները, նշելով իւրաքանչիւրին ծառայութեան մարզը:*

*Անդրադառնալով հիւպատոսութեան միամեայ գործունէութեան մէջ արձանագրուած յաջողութիւններու շրջագծէն ներս, երախտապարտ նշումներ կատարեց համայնքէն իրենց կամաւոր ծառայութիւնը բերող հարիւրաւոր գործընկերներու եւ մշակութային միութիւններու, որոնք սատար հանդիսացած են հիւպատոսութեան նախաձեռնութիւններուն: Սերտ կապի մէջ գտնուած է աւանդական կազմակերպութիւններու հետ: Անկախաբար հայ համայնքէն ներս տարուած աշխատանքներուն, նաեւ յատուկ յարաբերութիւններ պահած է հիւպատոսութիւնը, ըլլա՛յ ամերիկեան, ըլլա՛յ միջազգային շրջանակներու հետ, տրուած ընդհանրապէս մշակութային բնոյթի յաճախակի փոխադարձ այցելութիւններու:*

*Մեծարգոյ Գլխաւոր Հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեան դիտել տուաւ, թէ 2011 Թուականը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20 ամեակն ըլլալով հիւպատոսութիւնը կը պատրաստուի յոբելինական միջոցառումներու ծրագրումին:*

*Զեկոյցի աւարտին Մեծարգոյ աւագ հիւպատոսը առիթ տուաւ ներկաներուն հարցադրումներ կատարելու եթէ ունին:*

*Ելոյթ ունեցողները մեծապէս գնահատեցին Հիւպատոսութեան մշակութային գործակցութեան ճանապարհով ծաւալած համայնքային, միջ համայնքային, ազգային եւ միջազգային քաղաքականութիւնը, որ մեծ ներդրում մըն է հայ եւ օտար համայնքներու միջեւ՝ սերտ գործակցութենէ ներս:*

*Մամլոյ ասուլիսէն ետք տեղի ունեցաւ Ամանորեան շքեղ հիւրասիրութիւն, որ իր աւարտին հասաւ յարգարժան աւագ հիւպատոս Գրիգոր Յովհաննէսեանը շրջապատող ներկաներու խմբային նկարահանումով:*

## ԿՀԳՄ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

*Քալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան 2011 թ Յունուար ամսուայ գրական հանդիպումները տեղի կունենան Կլենտէյլի Հանրային Գրադարանում,* 222 East Harvard St, Glendale CA 91205.

*1. Ուրբաթ, Յունուարի 14ին, երեկոյեան ժամի 6ից 7ը ընդունելութիւն. ապա 7ից 9ը կը կայանայ շնորհանդէս բանաստեղծ Աշոտ Ղամբարեանի «ՓԱՐՈՍ» հատորի: Բանաստեղծ Շահէ Քէօրօղլեանը կը ներկայացնի գրական արժեւորում: Ասմունքներ՝ Նունէ Աւետիսեանի եւ Արամ Մխիթարեանի: Տեղի կունենայ գինեձօն:*

*2. Կիրակի, Յունուարի 23ին, երեկոյեան ժամի 6ից 9ը: Կը կայանայ շնորհանդէս Դոկտ. Վարդան Թաշճեանի «ԱՄԵՆԱՅՆ ՍԻՐՈՎ» հատորի: Բանաստեղծ Գէորգ Քրիստինեան կը նախագահի նիստին: Գրող Թորգոմ Փոստաճեանը կը ներկայացնի հատորի գրական արժեւորումը: Ողջոյնի խօսք Նոր Հայաստան Օրաթերթի Խմբագիր Վահան Վահանեանի: Տեղի կունենայ գինեձօն:*

*Հրաւիրում է գրասէր հասարակութիւնը: Հիւրասիրութիւն: Մուտքը ազատ է: Էլնամակային հասցէ.* awaoc@yahoo.com :

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ



*Սուրբ Ծննդեան Տօնին օրը, Հինգշաբթի, Յունուար 6ի առաւօտեան ժամը 9:30ին, Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հանդիսապետութեամբ, կատարուեցաւ ժամերգութիւն:*

*Իսկ ժամը 10:30ին Սրբազան Հայրը հոգեւորականներու, սարկաւագներու եւ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբի կողմէ «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Մայր Տաճար, մատուցելու Սուրբ Ծննդեան Պատարագ:*

*Արարողութեան ներկայ էին Թեմական Խորհուրդի Փոխ Ատենապետ՝ Տիար Ռապըրթ Է. Պարսամ, Տիար Յովսէփ Կանիմեան, Լոս Անճելըսի մէջ պաշտօնավարող Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան, Միջ-Եկեղեցական յարաբերութեանց հոգեւորականներէն Հայր Ալէքսի Սմիթ՝ ներկայացուցիչը Լոս Անճելըսի Կաթոլիկ Եկեղեցւոյ, Տիար Լէրի Զարեան, ՀՅԴ ներկայացուցիչներ՝ Դոկտ. Վիգէն Յովսէփեան եւ Ժագ Գոսակեան, ՌԱԿ ներկայացուցիչ Տոթք. Ռաֆֆի Պալեան, ՍԴՀԿ ներկայացուցիչ Տիար Գաբրիէլ Մոլոյեան եւ պատուարժան ա՛յլ հիւրեր:*

*Սրբազան Հայրը իր հոգելից եւ խանդավառ քարոզին մէջ ողջունեց ներկայութիւնը Հայր Ալէքսի Սմիթի, Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոսին եւ յարգարժան միւս հիւրերուն ներկայութիւնը: Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տօնին առթիւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ղրկած պատգամը կարդաց, ապա բարեմաղթութիւն-*

*Շար.ը էջ 19*

# ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՕՐԸ ՋՐՕՐՀՆԷՔ GLENDALE ADVENTIST ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՄԷՋ

*Այսու հոգեկան գոհունակութեամբ կը հաղորդենք Թեմիս համայն հաւատացեալներուն, թէ Յունուար 5ին, 2011, Սուրբ Ծննդեան Ճրագալոյցի օրը Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդական փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեան եւ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեան* Glendale Adventist *Հիւանդանոցին մէջ կատարեցին Ջրօրհնէքի արարողութիւն: Սրբազան Հայրը տուաւ իր հոգեւոր պատգամը, ապա իւրաքանչիւր պաշտօնեայի պատշաճ նուէր բաժնեց: Իր հերթին հիւանդանոցի նախագահը յանուն հիւանդանոցի տնօրէնութեան, Սրբազան Հօր յանձնեց գնահատական յուշանուէր մը:*



*Այնուհետեւ Սրբազան Հայրը եւ ուղեկից հոգեւորականները այցելութիւններ տուին հիւանդներուն: Սրբազան Հայրը աղօթեց եւ ամանորի ու Սուրբ Ծննդեան մաղթանքներ փոխանցեց:*



# ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ



*ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ*

*Դեկտեմբեր ամիս... Հայ քոյրերու Վարժարանը, բանիւ եւ գործով, լիացած էր Սուրբ Ծննդեան խորհուրդով:*

*Զարդարանքներով, դասարաններէն արձագանգող արտասանութիւններով, երգերով եւ երաժշտութեամբ, ամսուան յատուկ աղօթքներով եւ շարականներու երգեցողութեամբ Հայ Քոյրերու վարժարանի մթնոլորտը տօնական, ջերմ եւ ուրախ էր:*

*Արդարեւ մանկապարտէզէն մինչեւ ութերորդ դասարանի աշակերտները, իրենց դասերու կողքին, տօնական օրերու նախօրեակին նաեւ լծուեցան Ծննդեան հանդիսութեան պատրաստութեան՝ ըլլան անոնք կաղանդի յատուկ դասարանային աշխատանքներ կամ խմբային՝ երգչախումբի փորձեր, թատրոնի պատրաստութիւն... որոնք բոլորն ալ՝ անգամ մը եւս, Հայ Քոյրերու Վարժարանը վերածեցին մեղուաբեթակի անոր տալով տօնական օրերու փայլք ու հրապոյր:*

### Ա. Ծննդեան Փառատօն

*Դեկտեմբեր, 4, 2010ի յետմիջօրէին, Հ. Ք. Վարժարանը մասնակցեցաւ Մոնթրոզ քաղաքի Սուրբ Ծննդեան աւանդական փառատօնին: Մեծ խումբ մը աշակերտներ, կազմակերպութեամբ աշակերտական խորհուրդին, ներկայացուցին վարժարանը եւ աւետեցին Քրիստոսի գալուստը, ներկայացնելով Մանուկ Յիսուսի Ծնունդը կենդանի պատկերով մը. խումբին կ՚ընկերակցէին Վարժարանիս Առաքինազարդ Քոյրերը, ուսուցչուհի Տիկ. Ցողիկ Մելքոնեան եւ ծնողներ:*

### Բ. Ուտեստեղէնի Հաւաք

*Տօնական օրերուն կարիքաւորին օգնելու աշխատանքին աշակերտները մասնակից դարձնելու եւ այս գեղեցիկ ունակութիւնը անոնց մօտ արմատացնելու նպատակով՝ րիւրամեայ բարեսիրական միութեան աշխատանքներուն:*

### Գ. Սուրբ Ծննդեան Հանդէս

*Հայ Քոյրերու Վարժարանը ըստ աւանդութեան այս տարի եւս ունեցաւ Ս. Ծննդեան զոյգ հանդէսներ՝ Մանկապարտէզի եւ Նախակրթարանի բաժիններով, երկու յատուկ օրերու ընթացքին, հոգեկան մեծ հաճոյք եւ հրճուանք պատճառելով ծնողներուն եւ Հայ Քոյրերու Վարժարանի մեծ ընտանիքին:*

### Մանկապարտէզի Սուրբ Ծննդեան Ներկայացում

*Շաբաթ, 18 Դեկտեմբեր 2010ի առաւօտեան, տեղի ունեցաւ Մանկապարտէզի հանդէսը, Հայ Քոյրերու Վարժարանի Դանիէլեան սրահէն ներս, ներկայութեամբ՝ հոծ բազմութեան:*

*Հանդիսութեան բացումը կատարեց, Մանկապարտէզի տնօրէնուհի՝ Տիկ. Սոնա Գազանճեան, ան բարի գալուստի խօսքով տուաւ նուէր ստանալու եւ տալու իմաստը զայն յորջորջելով ժամանակաւոր եւ անցողակի, իսկ մեր նուէրները ըսաւ ան «Ձեր զաւակներն են որոնք մեզի կու գան ամէն Սեպտեմբեր ամսուան եւ անոնք մնայուն են եւ մեզի երջանկութիւն կը պատճառեն»:*

*Ինքս ինձ բարձրաձայնեցի, «Դարձեալ ե՞ս. - .ինչո՞ւ»: Այս պահին Պրոտուէյ փողոցով դանդաղ սլացող մի մեծ աղբատար մեքենայ իմ ամբողջ ուշադրութիւնը գրաւեց, մեքենայի թափքի վերին մասում Հայերէն խոշոր տառերով գրուած էր,«Մաքուր պահենք մեր քաղաքը» մի պահ աչքերիս չէի հաւատում, Կլենտէյլի ամենաբանուկ մասում Անգլերէնով փայլող ու թարթող գովազդային առատ ցուցափեղկերի մէջ Հայերէնով երեւացող քաղաքի մաքրութիւնը պահպանելու մասին գովազդը, արդէն գովազդ չէր, ոչ էլ ուշադրութիւն հրաւիրող վահանակ, այլ յատկապէս ինձ ուղղուած մարտահրաւէր: Պարտաւորութիւն պարտադրող պատասխան իմ վերոյիշեալ հարցին: Թէ «այո , դու պէտք է ուղղես քո անփոյթ հայրենակցիդ սխալը եւ ծխախոտի ճմրթուած տուփը վերցնես ու նետես աղբամանը, եթէ ուզում ես Հայի անունը չխաթարուի եւ խիղճդ հանգիստ մնայ: Այս մտորումների մէջ էի, որ իմ սպասուող ճեպընթաց բասսը կանգնեց իմ առջեւ, դռները բացուեց եւ լսուեց բարձրախօսի կանացի մի քնքուշ ձայն, որը յայտարարում էր կանգառի անունըձ*

*Ինձ մնում էր իմ առջեւ դրուած խնդիրը չլուծուած «դաշտը լքել», եւ սեւական վարորդի բռնազբօսիկ ժպտերես հայեացքի ներքոյ ներս մտնել քանի որ աշխատանքի վայրում էլ այլ «մարտահրաւէրներ» էին սպասում:*

# ՓՈՂՈՑ, ՈՐԸ ՏԱՆՈՒՄ Է ԴԷՊԻ ՀՐԱՊԱՐԱԿ

## (ՊՏՈՅՏ ՄԸ ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆԻ «ԱՅՆ ՄԻՒՍ ՓՈՂՈՑԸ» ՆՈՐ ՎԷՊԻՆ ԷՋԵՐԷՆ ՆԵՐՍ )

***ԳԱՐՈՒՇ ՀԱՐԵԱՆՑ***

*Ի սկզբանէ ասեմ, որ մեր աւագ գրչեղբայրը բեղմնաւոր արձակագիր է, սրտցաւ հրապարակախօս ու հասարակական անդուլ գործիչ, ում անաչառութիւնից ու մանաւանդ գրչից՝ ոչինչ է վրիպում, լինի դա՝ նկատառում, յօդուած, ակնարկ, դիմանկար, գրախօսութիւն, էսսէ, նորավէպ, պատմուածք, թէ վիպակ ու վէպ: Ինչի էլ որ ձեռնամուխ է լինում այս անուանի, հեղինակը, «նիւթը» պրծում չունի նրա ստեղծագործական արշաւանքից: Ապաքինուած պիտի համարել թեման, եւ գիրքը ստացուած՝ եթէ նրանց գլխավերեւում փայլատակել է գուբելեանական արդարութեան բազմաշեղբ նշտարը... Հանգամանք, աւելի ստոյգ՝ կարգավիճակ, որի խորքում տրոփում-մարտնչում է անհանգիստ գրողի սիրտը՝ քաղաքացիական արժանապատւութեան բոլոր դրսեւորումներով բեռնուած, ներքին տագնապի զինուորագրուած, «Պասպորտից» մինչեւ «Փտախտը» համարձակօրէն այպանելու ելած:*

*Աստանդական դեգերումների բերումով պնդացած, համարձակ ճակատագրի բովով անցած, բնութեան չորս տարերքներով կոփուած, բարոյակամային վարքագծով թրծուած, աֆրիկաներն ու արաբական աշխարհները չափչփած, հիմա էլ ամերիկաները ոտքի տակ առած, փոքր մարդու մեծիկ ողբերգութիւնը կարեկցանքից վերապրող նախատիպարը՝ եւս մի քանի առաքելութիւններ ունի: Նա՝ նախապէս ժառանգորդն է հայի դէմ սանձազերծուած եւ հրահրուած-իրագործուած ցեղասպանութեան: Համազգային պահանջատէրն է խլուած հայրենիքի եւ միլիոն ու կէսնոց նահատակաց ապրող յիշողութեան իրաւայաջորդը:*

*«**ԵՍ ԱՇԽԱՐՀ ԵԿԱՅ ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐԸ ՆՈՒԱՍՏԱՑՆԵԼՈՒ ԵՒ ՅԻՄԱՐՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ:**» Յիսուս Նազովրեցու այս իւրայատուկ պատգամից, որ վէպի նախաբանն է, մինչեւ գրքի վերջին նախադասութիւնը՝ «Անտունին մէկ-նունով ամայացաւ մեր փողոցն ու բծխիի իր ծառը: Անցեալի յիշատակներով հարուստ իմ **ԱՅՆ ՄԻՒՍ ՓՈՂՈՑԸ**...», հեղինակը հմուտ ժամագործի նման չի գլանում ախտորոշել անսարքուղեան դրդապատճառները եւ ըստ արժանւոյն, նոյնիսկ հապճէպ գտնել նորոգման բանալին: Յիրաւի, «Ամերիկայի Միացեալ Նահանգներ» կոչուած այս հերթապահ երկիրը նաեւ աներդիկաւորների հայրենիքն է՝ հարուստի քսակին յենուած, բայց աղքատի չալակը ելած անճոռնի մի բեռ՝ աւելի շատ պարտականութեան, քան իրաւունքի՝ ստորացնող զանգուած...*

*Եւ վիպասան Պօղոս Գուբելեանը մեծաւ բծախնդրութեամբ կառուցում է իր նոր գիրքը, ուր «բնակեցնում» է նաեւ հայաստանցի եւ պարսկաստանցի-իրանցի հայերի, որոնցից մէկը՝ ափսոսալով մայթի պարապ հողը, ձմերուկ է ցանում, որի բերքով էլ զարմացնում է թէ՛ օտարներին եւ թէ՛ աֆրիկաներում կեանք ու ջիղ մաշմած, «մարդակերների» հետ սեղան նստած-ողջ ելած արձակագրին, որը փայփայելով իր ոճը, այնուամենայնիւ, չի դիմում իր արձակի բանաստեղծականացմանը: Նոյնիսկ տեղ-տեղ էլ անմշակ է թողնում, որ ընկալուի մշակումների տառապանքն ու ստեղծագործական բերկրանքը: Թէեւ շատ չեն աֆորիստիկ արտայայտութիւնները, թեւաւոր խօսքի արժէք ունեցող նախադասութիւնները, յամենայնդէպս, յիշարժանութեան առաջին հարթակ են գալիս կերպարները, որը վէպի յաջողութեան հիմնական գրաւականն է: Այո, լաւ ու լաւագոյն արձակը ոչ թէ նկարագրութիւններով է համարւում կայացած, այլ՝ առաջին հերթին միջանցիկ եւ հակամիջանցիկ գործողութիւնները կրող ու զարգացման տանող կերպար-անհատականութիւններով: Այս առումով էլ է առանձնանում Պ. Գուբելեանի նոր վէպը: Ընդհանրացումը՝ «մի բան պիտի կայանար նմանօրինակ ամայութեան սահմաններում: Եւ փոքր մարդու մեծ ողբերգութեան ճռնչացող շղթան մետաղէ սողունի զգուշութեամբ փորսող է տալիս Խաղաղականից մինչեւ Ատլանտեանը... ովկիանոսից ովկիանոս է ձգւում այդ՝ արտաքնապէս աննշմար, սակայն խորքապէս հասարակական-ընկերվարական կեանքը սասանող, ամէն վայրկեան ցնցումներ ցնկնող, առայժմ անլուծելի թուացող խնդիրը...Ամերիկան թափառողների, պանդուխտների, անօթեւանների, բախտախնդիրների, հացկատակների սպիտակ, սեւ, դեղին, շագանակագոյն մի խառնարան է, որի հրաբուխը չի կարելի համարել **ՀԱՆԳԱԾ** ...Ոչ, այն ամէն վայրկեան, ցանկացած առիթով կարող է ժայթքել ու պայթել խայտաբղէտ հասարակութեան գլխին...Փոքր մարդկանց համախմբուածութիւնն է դրա գերեզմանափորը, որոնցից մէկն էլ «Այն միւս փողոցը» վէպում է մաքառում: Եւ դա այն փողոցն է, որը փակուղի չի տանում, ընդհակառակը՝ միտւում է դէպի հրապարակ, հասարակական-քաղաքական հնչողութեան արձագանքները կենսականօրէն տարածելու վճռականութեամբ ... այսինքն, ոչ թէ վերջացած է դիտում հարցը, այլ՝ պատասխան չի գտնում, ուստի Դելակրուայի յայտնի կտաւի նմանութեամբ, պատնէշն ի վեր է մագլցում ոչ միայն դրօշակ ծածանելու, այլեւ սեփական ազատութիւնը կռելու նպատակասլացութեամբ՝ իրաւունքները մօտալուտ ոտնահարումից փրկելու համար... Այս բարդ ու հակասական հանգոյցների շուրջն է կարծես ծաւալւում Պ. Գուբելեանի վիպական*

*Շար.ը էջ 18*



# ՄԱՐԴԸ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ

Յիշողութիւնը կենդանի էակի նման է եւ ունի իր բնաւորութիւնը, իր կամայականութիւնը: Այն կարող է երկար տարիներ պահպանել եւ մանրամասն յիշելու արտադրել մանկութեան շրջանի մի որեւէ չնչին բան, եւ կարող է քմահաճօրէն ծիծաղելի ու նեղ դրութեան մէջ դնել, ժամեր առաջ իւրացրած որեւէ բան մոռացութեան տալով:

Գիտնականները վաղուց են զբաղւում յիշողութեան գաղտնիքը բացայայտելու համար: Սակայն սովորական մարդկանց հետաքրքրում եւ յուզում է ոչ թէ յիշողութեան աշխատանքի մեխանիզմը, այլ աւելի սովորական ու առօրէական բաներ: Նրանք ուզում են իմանալ իրենց մտապահող սարքի սահմանները եւ գտնել այն բարելաւելու ուղիները, քանի որ շատերը դժգոհում են իրենց յիշողութեան անբաւարարութիւնից:

Յիշողութիւնը այն հիմքն է, որի վրայ ստեղծւում է ուղեղը: Մեր վերաբերմունքը օտարների նկատմամբ, մեր անհատականութիւնը, մեր հնարաւորութիւնները, մեր մտածողութիւնը, մեր ամէն ինչը կապուած է յիշողութեան հետ:

Նշանաւոր մարդիկ, գիտնականները միշտ էլ հզօր յիշողութիւն են ունեցել, իսկ դրանցից շատերը յիշողութեան մէջ ամէնից շատ գնահատել են մոռանալու ընդունակութիւնը: Օրինակ՝ Ժան Ժակ Ռուսօն իր «Խոստովանութիւն» գրքի մէջ գրում է.-«Իմ յիշողութեան յատկութիւններից մէկը արժանի է յիշատակման: Այն ծառայում է ինձ լոկ այն քան ժամանակ, քանի դեռ ես ապաւինում եմ նրան. հէնց որ նրա բովանդակութիւնը վստահում եմ թղթին, այն ինձ դաւաճանում է, եւ ես արդէն չեմ յիշում, թէ ինչ եմ գրել»:

Էդգար Ալէն Պօն նոյնպէս խելացի խորհուրդ է տուել ասելով. «Եթէ ու զում էք ինչ որ բան մոռանալ, անմիջապէս գրէք, որ պարտաւոր էք յիշել այն»:

Այս խորհուրդն օգտակար է մտաւոր աշխատանքով զբաղուող մարդկանց համար, քանի որ ներկայումս փոթորկալից տեղեկութիւնների ովկիանոսը հեշտութեամբ կարող է ողողել յիշողութիւնը, եթէ չտիրապետենք անկարեւորը մոռանալու արդիւնաւէտ եղանակին:

Յիշողութեան զարգացման մասին խօսակցութիւնն սկսուել է մոռացութիւնից այն պատճառով, որ խնդրի այդ կողմին սովորաբար քիչ են ուշադրութիւն դարձնում, թէ եւ մոռանալու կարողութիւնն էական չէ եւ քիչ անհրաժեշտ. մի այն խիստ անհրաժեշտը մտապահելը տաղանդի նշաններից մէկն է: Իրօք պիտի ասել, որ մոռացութիւնը յիշողութեան հիւանդութիւն չէ, այլ նրա առողջութեան պայմանը:

Եւ այս պէս, երբ խօսւում է յիշողութեան մասին, մարդկանց առաւել հետաքրքրում է նրա զարգացման ու կատարելագործման խնդիրը: Բոլորն ուզում են յիշել լաւ ու երկար ժամանակով:

Ուղեղն ուսումնասիրող մասնագէտները հաստատում են, որ միջին մարդը մինչեւ իր կեանքի վերջը իր մէջ կրում է յուշերի ոչ այնքան փոքր բեռ: Անուններ, հասցէներ, զանազան բառեր եւ այն լեզուի քերականական ձեւեր, որով խօսում է, բազմապատկման աղիւսակ, կեանքի վաղ տարիների կարեւոր դրուագներ. այս ամէնը մէկ անգամ յիշողութեան մէջ ամրանալով այնտեղ մնում է մշտապէս:

Մեզանից ամէն մէկը, հաւանաբար, ուշադրութիւն դարձրել է կարճատեւ յիշողութեան գոյութեանը:

Անպայման պատահել է, որ զանգահարել էք մի որեւէ անծանօթի, սակայն հեռախօսն զբաղուած լինելով, համարը հաւաքել էք մի քանի անգամ. քիչ յետոյ փորձել էք նորից զանգահարել նոյն համարով, եւ ահա, այ քեզ բան, մոռացել էք վերջին մէկ երկու համարները: Այցելութիւնների ժամանակ հանդիպում եւ ծանօթանում էք նոր մարդկանց հետ: Արդեօք մի առ ժամանակ անց յիշո՞ւմ էք նրանց անունները: Եթէ ծանօթանալու պահին ճիգ չէք անում անունը յիշողութեան մէջ պահելու, դժուար թէ կարողանաք վերականգնել ու վերյիշել այն:

Եթէ ուզում էք նոր տեղեկութիւնները կամ գիտելիքները տեղափոխել երկարատեւ յիշողութեան մէջ, նրա վրայ կենտրոնացրէք ձեր ուշադրութիւնը, կրկնէք մի քա նի անգամ: Իհարկէ, պիտի ասել, որ պատահում է նաեւ, որ ինչ-որ մի դէպք ինքնաբերաբար մտապահւում է, յիշւում: Դա նշանակում է, որ նրանում կար մի ինչ որ յատուկ, հետաքրքիր բան, որը տպաւորուել է եւ կամ ակամայ ուշադրութիւն էք դարձրել:

Մինչեւ այստեղ, ինչպէս տեսանք, իւրաքանչիւր մարդ ունի կարճատեւ ու երկարատեւ յիշողութիւն:

Կայ նաեւ միջանկեալ յիշողութիւն: Երբոր տեղեկութիւնը հասնում է ուղեղին, այն ենթարկւում է նախնական տեսակաւորման: Այսպէս, մի մասը, որն աւելի հետաքրքրական է կամ աւելի կարեւոր, մի քանի րոպէով պահ է տրւում միջանկեալ յիշողութեանը:

Եթէ այն հետագայ տեսակաւորման ընթացքում ուշադրութեան է արժանանում, մեր յիշողութեան յատուկ մեխանիզմը նրան փոխադրում է երկարատեւ յիշողութեան մէջ: Պարզ է, որ թոյլ տպաւորուած կամ արձանագրուած տեղեկութիւնները կարող է դուրս մնալ յիշողութեան համակարգից եւ ամբողջապէս մոռացութեան մատնուել, եթէ երբեւէ հետագայում չի ամրապնդւում վարժութեամբ կամ կրկնողութեամբ:

Մէկ անգամ, սակայն ուշադիր կարդացէք եւ փորձէք յիշել հետեւեալ թուերը:

11, 54, 33, 84, 55, 66,
21, 36, 41, 96,

ապա գրէք դրանցից նրանք, որոնք յիշում էք, հնարաւորին չափ նոյն կարգով: Ձեր յիշած թուերի քանակը ցոյց կը տայ ձեր մեխանիկական տեսողական յիշողութեան ծաւալը, իսկ հերթական կարգով յիշած թուերի քանակը ցոյց կը տայ նրա ճշտութիւնը:

Այս նոյն փորձը կարելի է անել ոչ թէ տեսողութեամբ, այլ նաեւ լսողութեամբ, եւ եթէ այդ թուերի շարանը որեւէ մէկը կարդայ բարձրաձայն, դուք կարող էք գնահատել ձեր լսողական մեխանիկական յիշողութիւնը: Համեմատելով առաջին եւ երկրորդ փորձերի արդիւնքները, կարելի է պարզել, թէ ձեզ մօտ յիշողութեան ո՞ր ձեւն է գերակշռում: Վարժութեամբ ու մարզումներով կարելի է զարգացնել որեւէ թոյլ կողմ: Ցամենայն դէպս, այս բանի իմացութիւնը հնարաւորութիւն կը տայ, որպէսզի անհատը յատկապէս աշխատանքում կամ ընդհանրապէս որեւէ պարագային ամէնից շատ յենուի հէնց դրա վրայ:

Այսպիսով, եթէ պարզուեց, որ ձեր յիշողութիւնը աչքի չի ընկնում բացառիկ ունակութեամբ, որը եւ սովորական երեւոյթ է, պէտք չէ յուսահատուել, այլ հարկաւոր է զբաղուել նրա կատարելագործմամբ, միայն թէ մի մոռացէք ինքնազարգացման գլխաւոր օրէնքը՝ աշխատանք, յամառութիւն եւ հետեւողականութիւն:

Յիշողութիւնը զարգացնելու լաւագոյն պատուիրաններից մէկը կրկնողութիւնն է, ճիշտ այնպէս, ինչպէս որ լեռների ու բլուրների վրայ անընդհատ անցուդարձից արահետ է բացւում, յիշողութեան մէջ էլ բազմաթիւ կրկնողութիւնների հետեւանքով նկատելի հետք է մնում:

Դուրս էք գալիս բաց բնութեան մէջ, հիանում էք բնութեան չքնաղ որեւէ տեսարանով եւ ուզում էք պահպանել ձեր յիշողութեան մէջ: Դրա համար հարկաւոր է այն դիտել մի քանի անգամ, անընդմէջ եւ աչքերը փակելով ու բացելով, որպէս զի տպաւորուի ձեր ուղեղում եւ միաժամանակ տեսածը համեմատելով նրա հետ, ինչ երեւում է ձեր ներքին տեսողութեան էկրանի վրայ:

Այսպէս էր վարւում աշխարհահռչակ ծովանկարիչ Յովհաննէս Այւազովսկին, որը կատարելագործութեան հասցնելով իր տեսողական մեխանիզմը, իր բոլոր նկարչական կտաւներն ստեղծում էր յիշողութեամբ:

Անհրաժեշտ է նա եւ իմանալ կրկնողութեան ճիշտ գործընթացը՝ կարդացածը մտապահելիս: Դա ընթերցանութեան, այսինքն ընկալման յամառ հերթագայութիւնն է մտապահելով եւ ապա կարդացածը պատմելով: Բնագիրը, լինի դա արձակ թէ չափածոյ, պէտք է կարդալ ու կրկնել ոչ թէ մաս առ մաս, այլ ամբողջութեամբ: Եթէ որեւէ բան մոռացուել է, չպէտք է շտապել նայել բնագ րին, այլ պէտք է դի մել յիշողութեանը:

Կրկնողութիւնները յոգնութիւն պատճառելու չափ չպէտք է երկարատեւ լինեն, 40-50 րոպէից ոչ աւել, որից յետոյ հարկաւոր է 10-15 րոպէ ընդմիջում տալ: Օգտակար է կրկնութիւնը կատարել քնից առաջ եւ քնից յետոյ միանգամայն թարմ ուղեղով:

Ի դէպ, շատ օգտաւէտ է տրամաբանական, զուգորդման մեթոդը: Որեւէ բան մտապահելու համար հարկաւոր է ոչ թէ պարզապէս անգիր անել փաստերը, երեւոյթներն ու նկարագրութիւնները, այլ ձգտել, որպէսզի համեմատական եզրեր գտնել եւ զուգորդել: Նման դէպքում կարելի է հետագայում պահեստից արագօրէն եւ հեշտութեամբ դուրս բերել պէտք եղած տեղեկութիւնները:

Նիւթի իմաստային մասերի բաժանումը եւս կարող է օգտակար հանդիսանալ, առանձնացնելով գլխաւորը երկրորդականից, փաստարկուածը չապացուցուածից, բարդը պարզից:

Եթէ ճիշտ տեղի ունենայ իմաստային բաժանումը, այլեւս մեխանիկական մտապահութեան կարիք չի զգացուի, քանի որ ապացուցուած է, որ իմաստային յիշողութեան արդիւնաւէտութիւնը 25 անգամ բարձր է մեխանիկական յիշողութեան արդիւնաւէտութիւնից:

Ուրեմն ինչպէս տեսնում էք, յիշողութիւնը միւս բոլոր ընդունակութիւնների պէս զարգանում է մէկ ճանապարհով՝ մարզումներով: Դրա համար էլ ճիշտ չեն նրանք, ովքեր դժգոհում են իրենց յիշողութեան թուլութիւնից, եւ սակայն որեւէ ձեւով չեն ձգտում այն ուժեղացնել: Մի բան, որը կը բերի ինքնավստահութիւն, կատարելագործութիւն եւ յաջողութիւններ կեանքի բոլոր ասպարէզներում:

Կազմեց՝ Ժ. Ալավերդեանը

# ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՅՈՅՍ Է ՅԱՅՏՆԵԼ

Շարունակուած էջ 5-էն

կանում է վիրահայոց թեմից, Համայն վրաց Պատրիարք Իլիա Բ-ն ջերմօրէն ընդունել է վիրահայ պատուիրակութեանը եւ վրաց եկեղեցու անունից շնորհաւորել հայ ժողովրդին, Հայ եկեղեցուն ու ՀՀ նախագահին, Նոր տարուայ եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով:

Հանդիպմանը շնորհաւորական եւ ողջոյնի խօսքով հանդէս են եկել թեմի Առաջնորդ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանը, ՀՀ Արտակարգ եւ լիազօր դեսպան Հրաչ Սիլվանեանը, «Վրաստան» թերթի գլխաւոր խմբագիր Վան Բայբուրթը, Վրաստանի յայտնի մտաւորական եւ հասարակական գործիչ՝ Գիվի Շահնազարը եւ Վրաստանում Հայ Գործարարների Միութեան ներկայացուցիչ Սամուէլ Աղեկեանը, Վիրահայ պատուիրակութիւնը Համայն Վրաց Պատրիարքին փոխանցեց նաեւ Վրացահայ յայտնի գեղանկարիչ Լեւ Բոյախչեւի աշխատանքը:

Իլիա Բ-ն մէկ անգամ եւս իր յարգանքը եւ բարեկամական սէրն է արտայայտել համայն հայութեան հանդէպ եւ յորդորել հաւատարիմ մնալ դարերից եկող հայ-վրացական եղբայրութեան եւ բարեկամութեանը, յոյս յայտնելով, որ միասնական ուժերով կը յաղթահարուեն մեր եկեղեցիներին եւ ժողովուրդներին յուզող հարցերը:

Իլիա Պատրիարքը վիրահայ պատուիրակութեանը նուիրել է Պատրիարքարանի մառանից գինի՝ յոյս յայտնելով, նաեւ որ այս տարի կը կայանայ Նորին Սրբութիւն Գարեգին Բ.ի եղբայրական այցը Վրաստան եւ ինքը պատրաստ է ջերմօրէն ընդունելու Ամենայն հայոց կաթողիկոսին եւ վերահաստատել հայ-վրացական եկեղեցական հնամենի բարեկամութիւնը:

Յիշեցնենք, որ Գարեգին Բ.ի այցելութիւնը Վրաստան արդէն մի քանի անգամ յետաձգուել է Վրաց պատրիարքի նախաձեռնութեամբ՝ տարբեր պատճառաբանութիւններով:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԽՂՃԻ ՁԱՅՆԸ

*Շարունակուածէջ 14–էն*

*չհասած Ֆերդոսի հրապարակին: Ճաշարանը բանում էր Թագաւորի ժամանակ, մատակարարում էինք սանդուիչներ, դոլմա, լեզու, ուղեղ եւ այլն առանց ալկոհոլիկ խմիչքի, որը յաճախորդներին վաճառւում էր ճաշարանին միացած իմ նպարատնից տուն տանելու համար: Իրանի իսլամական յեղափոխութեան հենց առաջին օրուանից արգելուեց ալկոհոլիկ խմիչքը եւ բոլոր քաղաքների այն տեղերը՝ խանութները եւ ճաշարանները, ուր խմիչք էին մատուցում եւ կամ վաճառւում՝ նրանց փեղկերը, ապակիները ջարդեցին, խմիչքները սրուակներով կոտրտեցին, խմիչքի գործարանները փակեցին՝ դասքանները ջարդեցին, նիւթական մեծ վնասներ պատճառելով թէ տէրերին, թէ՝ երկրի տնտեսութեան, այն համոզումով էր արւում այս գործը, թէ՝ իսլամական երկրում խմիչքի գործածութիւն չպիտի լինի, որն հակասում է իսլամ կրօնի կանոններին:*

*Այստեղ ընդհատելով պրն. Յարութիւնին այդ ջարդ ու փշուր անելու դէպքերից մէկն եմ յիշում ականատեսի վկայութեամբ.*

*-Մեր տան մօտիկ փողոցի վրայ գտնւող ճաշարանի ապակիները ջարդւում էին տիրոջ ներկայութեամբ, երեք իսլամ երիտասարդներ էին մզկիթից գործուղղուած, օրուայ իրիկնապահին էր, որոնք մահակներով նախ դուան ապակիները փշրեցին, ապա՝ խմիչքների սրուակները, ամբոխ էր հաւաքուել, ափսոսանքով էր դիտում փչացող ապրանքներին, շատեր գլուխներն էին տմտմբացնում, ջղային եւ անհանգիստ վիճակ, սակայն ոչ մի հակազդեցութիւն նրանց խուլիգանական այս արարքի դիմաց: Նրանք գործը աւարտած լինելով դարձան դէպի հայ տիրոջ կոպտօրէն հրահանգելով.*

*-Նայի՛ր եւ տե՛ս, սրանից յետոյ չի թոյլատրուելու որեւէ մի տեսակ ալկոհոլիկ խմիչք վաճառել եւ գործածել, թէ՛ վաճառողները եւ թէ՛ գործածողները պատժի են ենթարկուելու:*

*Անշուշտ խմիչքի արգելման հրահանգը պաշտօնական էր, որի խախտողները ենթարկուելու էին պատժի, սակայն ոչ պատժողական վերաբերմունք ցուցաբերուեց ոչ իսլամների նկատմամբ նրանց արտօնելով օգտագործումը տներում իրենց պատրաստութեամբ առանց մուսուլմաններին վաճառելու: Այս օրէնքը յեղափոխութիւնից ի վեր գործադրւում է, անտեսողները պատժւում են՝ բանտարկուելով, դրամական տուժի ենթարկուելով եւ հրապարակաւ մտրակահարուելով : Հայերի համար այս մենաշնորհ օրէնքը՝ խմիչքի ազատ օգտագործելու օրէնքը, մի շարք հայ ընտանիքներում առաջացրեցին բարդութիւններ եւ անհանգստութիւններ:*

*Եթէ ալկոհոլիկ խմիչքը արգելւում էր, պէտք էր համատարած երկրի բոլոր քաղաքացիների համար լինէր, ոչ թէ բացառութիւններ նկատի առնւէր: Խմիչքը վերջ չի գտել, գաղտնի տարածւում է տարբեր խաւերի մէջ թանկ արժէքով մաքսանենգութեան ճանապարհներով:*

*Միջանկեալ խօսքս վերջացնելով դիմում եմ պրն. Յարութիւնին որպէսզի շարունակի.*

*-Ճաշարանում այնքան էլ յաճախորդներ չկային ամառուայ տօթի պատճառով, անմիջապէս մատուցողը նրանց է մօտենում եւ պատուէր է ստանում, շատ չանցած սեղանը նախշւում է տեսակ-տեսակ ուտելիքներով:*

*-Նրանք թէ ուտում էին եւ թէ բարձրաձայն թուրքերէն լեզւով զրուցում էին առանց նկատի առնելով թէ ուր են գտնւում, կարծես վայրը մի տեսակ իրենց սեփականութիւնը համարելով եւ ներկաներին բոլորովին անտեսելով: Նրանք լաւ կուշտ ու կուռ կերան, ծխախոտ վառելով ոտքի կանգնեցին եւ ճանապարհ ընկան:*

*-Ես դրամարկղի մօտ նստած հետեւում եմ նրանց շարժումներին:*

*-Մատուցողը մօտեցաւ նրանց եւ հաշիւ պահանջեց:*

*-Ներողութիւն պարոննե՛ր, ձեր հաշիւը 100 թուման կը լինի, խնդրեմ, վճարէք այս գումարը:*

*-Ի՞նչ հաշիւ, մենք տալացիկ չենք եւ ոչ մի բան չենք վճարելու:*

*-Հիմա որ այդպէս է, խնդրեմ, գնացէք այն դիմացը տիրոջ մօտ, ասէք, որ չէք վճարելու:*

*-Նրանք անտարբեր քայլերով, պարսկերէն լեզւով, գոռոզաբար դիմեցին ինձ:*

*-Դուք էք այս ճաշարանի տէրը:*

*-Այո՛, ես եմ:*

*-Մուսիօ՛, ինչպէս տեսնում ես, այս երեք յաղթանդամներս քո ճաշարանում հաց ենք կերել, լաւ էլ ախորժակով ենք կերել եւ կշտացել, հիմա էլ թողնում ենք ճաշարանդ առանց դրամը վճարելու.*

*-Ինչո՞ւ, միթէ ձեզ լաւ չծառայեցին, կամ ձեր կերած-խմածը լաւ չէր, որ չէք վճարում.*

*-Ամէն ինչը լաւ էր, սիրտներս ուզում է, որ չվճարենք:*

*-Ինչպէս թէ, միթէ անտէր երկիր է, որ քո ուզածը անես, ծառայութեան դիմաց հարկաւոր է վճարել:*

*-Մենք որեւէ մի սանար էլ չենք վճարի:*

*-Շատ լաւ, բայց մի բան նկատի առէք, ձեր կերածը հալալ չի լինի, եթէ Աստուած կայ վերեւում, թող նա մի բան անի, գնացէք, փող չեմ ուզում:*

*-Հայի հացը մեզ համար շատ էլ հալալ է, շատ էլ խօսես:*

*-Նրանք կարծես թէ մրցանակ շահողի պէս յաղթական խանութից դուրս նետուեցին խառնուելով անց ու դարձ անողներին, ես ապշել եւ քար էի կտրել, առաջին անգամն էր, որ այսպիսի դէպքի դէմ-յանդիման էի գտնւում, անշուշտ պատահել էր, որ դրամ չէին ունենում, սակայն խնդրելով ներում էի իրենց, բայց այս մէկն ինձ շուարեցրեց, չիմացայ ինչ տեսակ դիմադրութիւն ցոյց տամ, այդպէս հանգիստ նրանց թողեցի գնան: Ես ինձ նուաստացած էի զգում պարսիկ գործաւորներիս մօտ, որ նրանց հախից դուրս չեկայ, վախենալով կռուից ու հետեւանքից, սակայն սխալ թոյլ տուեցի, որեւէ գնով նրանցից պիտի պահանջէի իմ իրաւունքս, նոյնիսկ ոստիկանութիւն կանչելով, ամենայնդէպս չպիտի թոյլ տայի, որ գնան, սա պիտի վերագրել իմ թուլութեան եւ վախկոտութեան, իրաւունքը ինչ գնով եղել է՝ պէտք է առնել, քաղաքավարութեամբ չեղաւ, ուժով պէտք է առնել:*

*-Այս պատմութիւնը ժամանակի թաւալման հետ մոռացուելու վրայ էր, երբ խանութում դրամարկղի մօտ նստած հաշիւներ էի անում, տեսայ մի մարդ տժգոյն ու հիւծուած խառնաշփոթ վիճակում մօտեցաւ ինձ ասելով:*

*-Մուսիօ՛, եկել եմ իմ պարտքս վճարել:*

*-Ներողութիւն, ի՞նչ պարտք, դու ո՞վ ես:*

*-Ես այն երեք մարդկանցից մէկն եմ, որ երեք-չորս ամիս առաջ եկանք այստեղ, կերանք, կշտացանք եւ առանց վճարելու քեզ ծաղր ու ծանակ անելով, սպառնալով թողինք ու հեռացանք:*

*-Լաւ խորացայ մարդու դէմքին, տեսայ ճիշտ է ասում, նրանցից մէկն է:*

*-Ինչ պատահեց, որ եկաք ձեր պարտքը վճարելու.*

*-Մուսիօ՛, էն օրը դու մարգարէացար, երանի լսէինք քեզ եւ դրամը վճարէինք, գոռոզ եւ մոլեռանդ մարդիկ են փորձանքի ենթարկւում, ճիշտ ասացիր, որ այդ հացը հալալ չի լինի, իրօք էլ այդպէս եղաւ, մեծ աղէտ պատահեց մեզ մահուան գնով.*

*-Պատմի՛ր, տեսնենք, ինչ եղաւ, ինչ կատարուեց ձեր հետ.*

*-Այդ օրը մենք մեր սեփական ինքնաշարժով գնում էինք Նէյշափուր, մեքենան մեր մեծ ընկեր Հասանն էր քշում, շատ ուրախ էինք, որ հայի հացը կերել ենք առանց փող վճարելու եւ մեր անեկդոտներով հայերին ծաղրում, նրանց վրայ ծիծաղում եւ այսպէս զուարճանում էինք: Մեքենան հարազի ճամբից սլանում էր դէպի առաջ, ուշ գիշեր էր, ճամբան գնում էր բարձրաբերձ սարերի միջից՝ կիրճերից եւ կեռմաններից, ամէն տեղ խաւարն էր տիրապետում, խցիկի ապակիներից դուրս բան չէր երեւում, միայն ճամբան լուսաւորւում էր ինքնաշարժի լոյսով, դեռ կտրելիք ճամբայ շատ ունէինք, անցել էինք Գորգանը, ես մեքենայի խցիկի ետեւի աթոռին էի նստած, երեւում էր մեր մեքենավար Հասանը յոգնած է եւ աչքերը մերթ ընդ մերթ փակւում են, զգուշացրի իրեն, որ գնանք մի տեղում հանգստանանք, այդ մտքին էինք, մէկ էլ նկատեցի Հասանը մեր առջեւի ծանրաքարշից, որը շատ դանդաղ էր գնում, ծանր բեռի տակ կքած, վազանց կատարեց, միայն երկու մեքենաների բախումի ուժգին ձայնը լսեցի, էլ չիմացայ, ինչ պատահեց, մէկ էլ աչքերս բացեմ, տեսնեմ, հիւանդանոցումն եմ ոտքս եւ թեւս գաջի մէջ , հարց ու փորձ արեցի ընկերներիս մասին, ցաւօք տեղեկացրին, թէ նրանց հիւանդանոց տեղափոխելու ճամբին մահացել են:*

*-Ես ամէն ինչ թողած ուշ ի ուշոյ լսում էի նրան, իմանալով ընկերների մահուան մասին տխրեցի ասելով.*

*-Շատ եմ ցաւում այդ դէպքի համար, թող Աստուած իրենց մեղքերը ների:*

*-Այդ վթարից յետոյ գիշերները հանգիստ քուն չունեմ, անընդհատ սարսափելի երազների մէջ տանջւում ու տառապում եմ, մեքենայի արկածից իմ մահացած ընկերներս են աչքիս առջեւը գալիս, քեզ չվճարած փողի համար դատարան են տանում, ծեծում են, թուք ու մուր են անում, այսպիսի քաոսային գիշերներ եմ անցկացնում, այս բժշկի մօտ, այն բժշկի մօտ, քնաբեր դեղերով ինձ տուն են ճամբում: Մուսիօ՛, տե՛ս, ինչ եմ նիհարել եւ տկարացել: Բժիշկներից արդիւնք չտեսայ, կեանքը ինձ համար դարձել է ուղղակի դժոխք, մի քանի գիշեր առաջ երազումս երեւաց մի սպիտակահեր ծերունի ինձ խորհուրդ տալով պատուիրեց.*

*-Ես լաւապէս իմանում եմ քո հիւանդութեան եւ տանջուելուդ պատճառը, դու մեծ մեղք ես գործել, այն հային անտեղի վիրաւորել, անօրինաբար ձրիակերութիւն ես արել, սպառնացել եւ զօռ ես ասել առանց իմանալու որ քեզանից աւելի հզօրը կայ այս աշխարհում քեզ պատժելու համար, պարսկերէն ասաց՝ դաստէ բալա դաստ բեսիար աստ ( քեզանից շատ աւելի ուժեղն էլ կայ ), եթէ ուզում ես ազատուել այդ ցաւից, հոգեկան տուայտանքից, կը գնաս այդ Աստծու արարած հայի մօտ, ներողութիւն կը խնդրես, ձեռքը կը համբուրես, պարտքդ կը տաս, միայն այս դէպքում խիղճդ կը հանգստանայ, դու կը փրկուես այս վիճակից: Վերկա՛ց, գնա՛ նրա մօտ, եթէ ուզում ես ազատուել այս տարտարոսից:*

*-Ահաւասիկ մուսիօ եկել եմ իմ պարտքս վճարել, ահա՛, այն գումարը, աղաչում եմ, ներէք ինձ եւ նաեւ իմ հանգուցեալ ընկերներին, որպէսզի նրանց հոգին եւս խաղաղուի, արդարեւ մեր արածը հետեւանք էր գրգռութեանց եւ սխալ նախապաշարուածութեան հայերի նկատմամբ:*

*-Շատ ուրախ եմ, որ անդրադարձել ես քո սխալին, այն տհաճ վերաբերմունքին, որ ունեցաք իմ հանդէպ, ես ով եմ, որ ներեմ քեզ, թող Աստուած ների:*

*-Շնորհակալ եմ մուսիօ՛, հիմա զգում եմ խիղճս այդ ծանր բեռից թեթեւացած, մնաք բարով:*

*-Գնաս բարով, միայն մի բան մտքումդ պահիր, որ անտեղի ծաղրանքն ու ատելութիւնը եւ արդար իրաւունքի անտեսումը մեղք են Աստծու եւ մարդ-արարածի դէմ:*

*Այս դէպքը ինձ մտորումների պատճառ դարձաւ, յիշեցի մեր հայերի ջարդն ու կոտորածը 1915-1923 թուականներին թուրքերի միջոցաւ եւ հարց տուի ինձ՝ արդեօ՞ք այդ անմեղ հայերին կոտորողներն ու խողխողողները յետոյ հոգեկան ի՞նչ վիճակ են ստացել, արդեօ՞ք չեն տանջուել ու տառապել իրենց կատարած ահասարսուռ արարքի համար, վստահօրէն եղել են ազնիւ եւ մարդասէր մարդիկ, որոնք մեղայի եւ զղջանքի գրքեր են գրել, սակայն իրարու յաջորդող թուրք մոլեռանդ կառավարութիւնները խստիւ առաջը բռնել, արգելք են եղել, նրանց զղջանքի եւ մեղայի գալու հոգեբանութեան տարածման դէմ են կանգնել, իրենց հակահայ քարոզչութիւններով նրանց լռեցրել են:*

*Ես համոզուած եմ, որ արդարութիւնը անկասկած կը յաղթի, փաստը մեր դատի համար հետեւողական աշխատանքը եւ պայքարը, որն ի շահ մեզ արդիւնաւորւում է թիւրքերի մէջ արդարամտութեան արթնացման հետեւանքով, որը հետզհետէ աւելի թափ կը ստանայ եւ կը տարածուի:*

massispost.com
daily news updates

# ՓՈՂՈՑ, ՈՐԸ ՏԱՆՈՒՄ Է ԴԷՊԻ ՀՐԱՊԱՐԱԿ

*Շարունակուածէջ 15-էն*

*ներաշխարհը, գլոբալ տաքացման վտանգից վեր դասելով փոքր մարդու վերացման (բնաջնջման) վտանգը, որն արդէն դասակարգային կրունկի տակ է ճզմւում: Պայմանականօրէն է զարգանում նաեւ երկրորդ պատումը, որը հայեցի խնդիրներ շօշափելուց զատ, ասես նաեւ ուծացման ահազանգ լինի: Վէպի միջավայրի գաղտնիքն այն է նաեւ, որ մարդ-պարտապանը վաղուց մեռել-գնացել է էն աշխարհ, բայց դեռ պարտատիրոջ նամակներ են գալիս հանգուցեալի անունով ու հասցէով... Չես իմանում, խնդա՞ս, թէ՞ լաս: Հեղինակի պատկերաւորութեամբ ասած, սպիտակ հասարակութիւնը սեւականի հանդիպելիս՝ «խղճահարութենէ՞ն, թէ վախէն, աչքերը գետին կը յառէ, ինչպէս անտառի խեղճացած կենդանին»: Պարզ է, որ միմիայն ընկերվարական բախումը շրջանցելու մտայնութիւն կայ: Աղքատ աշխատուժի շնորհիւ հարստացածի եւ նրա պատճառով աղքատի սնանկացման կոնֆլիկտը կոլիցային պէտք է համարել, ոչ թէ կենցաղային: Դիպուածը ճակատագրական է երկուստէք էլ: Այո, «Ամերիկայի մէջ արուները չեն գրկեր գիրար», եզրակացնում է հեղինակը, իսկ մենք էլ մեր հերթին աւելացնենք, որ գրկուող որձերն արդէն օրէնքով կ՚ամուսնանան աշխարհում...«Ճէնթլմէն արտաքինին տակ ի՞նչպիսի ճիւաղ մը ծուարած է, որ չսպասուած մէկ պահուդ, քեզ կրնայ անակնկալի բերել...»:*

*Վաստակաշատ հեղինակի այս նոր գիրքը եւս մէկ շնչով կարդացուողներից է: Քով քովի եկած «բարոյազուրկ անկրօն ու պահպանողական հայուհին» բնաւ չեն խանգարում ընթերցանութեանը: Այս միջազգայնական սիրալիրութեան ֆոնին՝ շուտով կարող է հայերէն խօսող սեւական էլ յայտնուել փողոցում, վնաս չունի, սա Ամերիկան է... մենք էլ պանդուխտ ենք, վտարանդի... մեզ վրայ անջնջելի տպաւորութիւն են թողնում Ֆիլերը, Ջոնները, Ջշլիները, Սիսիները եւ այլք... իսկ մենք ձայն-ծպտուն հանողը չենք, մենք դրսի պատ ենք այս երկրի մէջ... օրինաւոր իրաւազուրկների նման, ինչպէս մայթի հողիկներում ձմերուկ աճեցնող պարսկահայ Հրանդը, որ տրտմում է ոչ թէ իր ձմերուկները գողանալու համար, այլ այն բանի, թէ գողոնը ո՞նց են մարսելու, ախր խակ են...*

*Ի դէպ, նա պինդ կերպարներից է, տիպաբանական համազգեստի մէջ պարուրուած, Գուբէլեանի ճանաչողական արուեստի շնորհիւ են փայլթլացող... Ցաւն այն է միայն, որ շատ ամերիկացիներ չգիտեն, թէ հայերս ի՞նչ հաւատի ենք դաւանում: Մեր բեղ-մօրուքի «մեղքով» մահմեդական էլ ենք թւում: Սա էլ խնդիր, որ ուղտի պէս երբեմն չոքում է մեր ազգային պատկանելութեան շէմին ու ներս մտնելու փոխարէն թքում է... «Դէ եկ ու մի՛ խենթանայ, վարդապետ»: Թէեւ հասկանալի բան է, որտեղ հոմլես կ՚ապրի, քարշ կու տայ իր գոյութիւնը, հենց այնտեղ էլ կ՚ապականի... իր անլուայ գարշանքով: Պատահական չէ գրողի տագնապահարոյց այս եզրահանգումը, որ «Թաղը ամբողջութեամբ դեռ պիտի նեխի, եթէ ընթերցասէր մեր բարեկամը ) անհերքիկըընդգծումը մերն է՝ Գ.Հ.) կէս գիշերէն մինչեւ լուսաբաց մրոտէ շրջակայ մայթերը»: Ուշագրաւ խնդիր է առօրեայ աղաւնիների գիշերելու հանգամանքը: Նրանք էլ են աներդիք-անտէր: Կառատան մէջ բնակութիւն հաստատելը բնաւ էլ շահաւէտութեան հետ կապ չունի:*

*Անշուշտ աղտոտում են իրենց շուրջը: Պարսկահայ վարպետի վրդովմունքը իր համար է հասկանալի, աղաւնիները զգում են միշտ էլ իրենց սպառնացող վտանգները, ինչ ազգի «հովանաւորութեամբ» էլ ապրելիս լինեն: Մինչեւ ե՞րբ...*

*Աննշան թուացող մանրամասնութիւններից բխում է հեղինակային նրբանկատութիւնը, վարպետօրէն նկարագրելու հոտառութիւնն ու հմտութիւնը...*

*Սարոյանական խորքի որոնումը տուածուրիկ է նաեւ այս արձակագրին: Նա յաջողութեամբ կարող է աւելորդ թուացող միջադէպի մէջ ասելիք պեղել-նշմարելորսալ, ինչպէս այս վէպում բաւական էջեր «զաւթած» աղաւնիների դէպքում: Այո, Գարֆիլդ փողոցի աննշան թուացող անցուդարձի նկարագրութեանը զուգահեռ զարգանում է Պօղոս Գուբէլեան վիպասանի գրողական վարպետութիւնը՝ գեղարուեստականութիւնը բարձրացնելով մէկ աստիճան վերեւ՝ դէպի համամարդկային հրապարակ տանող «այն միւս փողոցի» շնորհիւ: Մանաւանդ, որ ամերիկեան քաղաքների գրեթէ ցանկացած թաղամասում կարող ես նկատել համամարդկային գաղափարների օրրաններ, որովհետեւ ուզածդ ազգի «նմուշը» կայ այնտեղ՝ հիմնականում վարձու վեց պատերի միջեւ խարխափողների կարգավիճակում... Հայն ու հայութիւնն էլ՝ ՎՐԱԴԻՐ: Բոլոր ազգերն էլ ունենում են փոքր մարդու ողբերգութիւն: Անգամ շուրջ պիլլոն ու կէսնոց չինացիք, իսկական հնդիկները, որոնք միւսներից առաջ են զգում իրենց՝ օրէնքներին մերկապարանոց հետեւելիս: Նման արհեստական մի լրտեսացու կայ այս վէպում, որ տաղտկալիի մէկն է, չես ասի, որ Թաջ Մահալ տեսած, ազնուացած է ... Տնանկ, աներդիկ, Վիեթնամի դէմ մղուած անիմաստանհեթեթ պատերազմի վետերան ՖԻԼԸ ամերիկեան պանծալի, բայց եւ ստորին խաւի ներկայացուցիչն է, չքաւորութեան սահմանագծից անդին յայտնուած մարդնմանութիւն, եթէ մեծահարուստ լինէր, կարող էր իր թեկնածութիւնը դնել երկրի նախագահի պաշտօնի համար...աւա՜ղ, այդպէս չէ բազում շատերի մօտ, ովքեր ապրում են աղաւնիների եւ առնէտների ամենամերձ հարեւանութեամբ, ճիշտ այնպէս, ինչպէս վերջերս մի բանաստեղծի մօտ հանդիպեցի-կարդացի, թէ աղաւնիները կտուրների առնէտներն են, իսկ առնէտներն էլ՝ նկուղների աղաւնիները... Տիպական բնորոշում համայն ամերիկեան չերտաւորուած հասարակութեան ապրելակերպից ներս: Ներառեալ սարերի գոգհովիտներին, ծնկներին թառած, մի կերպ ծուարած առանձնատներն ու շէնքանմանները: Հարիւրամեայ Կլենտէյլ քաղաքի համեմատաբար մաքուր մայթերին տնանկներ չկան, սա բացառութիւն է, մասամբ համոզիչ: Օրինակ, եթէ Հոլիվուտում ծաւալուէին այս վէպի անցքերը, կասկածի տեղիք չէր տայ: Սակայն գրողի համար մաս-մաքուր քաղաքի արուարձանն էլ բախտորոշ է գիրք ստեղծելու նպատակն իրագործելիս: Վերջապէս, կարող ենք հակառակել ինքներս մեզ, թէ միջավայրը կարեւոր չէ շատ: Եւ պիտի սխալուենք... քանզի գեղարուեստական գրականութեան մէջ միջավայրը բաւարար դերակատարութիւն ունի, առանց որի կերպարները կտրուած կը լինեն հողից եւ ասֆալտից: Քաղաքը քաղաք է, ագարակ չէ, որ հաւ պահող էլ գտնէ: Այսինքն, կը պատահի: Հաւ պահող հայ կը ճարուի: Եթէ մայթեզրի հողում ձմերուկ աճեցնող պարսկահայ կայ, ինչո՞ւ անասուն պահող պէյրութահայ չլինի, կամ հաւ բուծող հայաստանահայ... Հայահայը պարապ տեղը նստող չէ: Նա պիտի մի բան անի, բզբզա, որ չհիւանդանայ: Այդպիսին է հայը կեանքում էլ, գրքերում էլ: Դերենիկ Դեմիրճեանի ասածի համաձայն՝ «հայի չափը չափազանցն է»: Դրանով է առանձնայատուկ, տարբերուող, աչքի ընկնող: Փոքր մարդու ողբերգութիւնը հայից հեռու չէ: Պարզապէս նկատել է հարկաւոր, նախատիպ դարձնելը երկրորդական գործ է արդէն, որովհետեւ աշխարհի բոլոր յեղափոխութիւնները փոքր մարդկանց հերոսական ողբերգութեան հաշուին են գլուխ գալիս: Վ. Հիւկոյի «Թշուառներից» մինչեւ Պ. Գուբէլեանի «Աներդիկները»:*

*Դարերն են փոխւում, սակայն ներքեւում ապրող վիրաւորուածների, նուաստացածների, նեղսրտածների հասարակական խնդիրը նոյնն է մնում: Նրանք յաճախ արհեստական, պարտադրուած ճակատագրի զոհն են, քան բնական-պատմականի...եւ որպէսզի չոչնչանան՝ յայտնւում են պայքարի հրապարակները տանող այն միւս փողոցներում, որոնք ամենակարճն են՝ երջանկութեան հասնելու, արեան գնով այն նուաճելու, ի վերջոյ, նաեւ տիրանալու համար:*

# «ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՈՐՈՒՍՏՆ Է»

*Շարունակուածէջ 6-էն*

*նակի վերջնական ամրագրման համար մենք պէտք է ունենանք միաձուլուած հայութիւն, իշխանութեանը վստահող հասարակութիւն եւ կայուն, արագընթաց զարգացող տնտեսութիւն: Ուրիշ ոչինչ:*

- Հայ-թուրքական յարաբերութիւններ: Զգա՞ց արդեօք իշխանութիւնն իր սխալը:

*- Ես չգիտեմ, դա դրսից պարտադրուած քա՞յլ էր, թէ սեփական նախաձեռնութիւն: Միշտ ասել ենք, որ Թուրքիայի հետ չպէտք է ունենալ ոչ մի յարաբերութիւն, քանի դեռ նա չի ընդունել Ցեղասպանութիւնը եւ վնասների հատուցման պարտաւորութիւնը:*

*Ինչքան էլ խաղաղասէր ձեւանայ, միեւնոյն է, այսօր էլ շարունակում է զինել ու մարզել ադրպէյճանական բանակը, միլիտարիզացնել Ատրպէյճանը, յատկապէս՝ Նախիջեւանը: Ե՛ւ ազգային, ե՛ւ քաղաքական, ե՛ւ տնտեսական, եւ հոգեբանական առումներով, այսօր Հայաստանը ոչ մի հիմք չունի Թուրքիայի հետ յարաբերութիւնները կարգաւորելու համար: Թուրքիան եղել է ու մնում է Ատրպէյճանի ռասիստական քաղաքականութեան, էթնիկ ջարդերի մասնակից երկիր: Ցամենայնդէպս, գործընթացի դադարեցումը ողջունելի է:*

- Ընդդիմութեան գլխաւոր կարգախօսը սահմանադրական կարգի վերականգնումն է: Ի՞նչ կը տայ այն հայ հասարակութեանը:

*- Այսօրուայ իրողութեան համար մենք պարտական ենք Սահմանադրութեանը եւ նրա վրայ ստեղծուած օրէնսդրութեանը: Ցանկացած սահմանադրութիւն, յատկապէս նորանկախ երկրի, մշակւում է եւ ընդունւում է տուեալ երկրի, ազգի նպատակների, խնդիրների լուծումները օրէնսդրօրէն ապահովելու համար: Հայաստանում տեղի ունեցաւ հակառակը՝ հիմք ընդունուեց օտարների սահմանադրական փորձը: Ո՞ր ազգային խնդրի լուծման ճանապարհն է ցոյց տուել 1995-ին հաչակուած եւ 2007-ին փոփոխուած Սահմանադրութիւնը: Սահմանադրութեան նպատակը Հայաստանում շուկայական տնտեսական համակարգի սահմանադրօրէն ամրագրումն էր, ինչը եւ իրականացաւ: Այդ համակարգը տարիների ընթացքում, իրեն լեգիտիմացնող Սահմանադրութեամբ, բերեց արդիւնաբերութեան, գիտութեան եւ գիւղատնտեսութեան խորը քայքայմանը, ժողովրդի մասսայական աղքատացմանը, անարդարութեան արմատաւորմանը եւ աննախադէպ արտագաղթի: Այդ համակարգը չի կարող ապահովել սոցիալական արդարութիւն, առանց որի անհնարին է ունենալ համերաշխութեան, վստահութեան եւ փոխօգնութեան հասարակութիւն: Այս Սահմանադրութիւնը եւ այս համակարգը 15 տարի գործում են ի վնաս ժողովրդի եւ երկրի:*

*Ուրեմն, ինչու՞ չիրականացնել 1992-ից ի վեր երկրում իրականացուած սոցիալ-տնտեսական, այսպէս կոչուած «բարեփոխումների» (մասնաւորեցում, սեփականաշնորհում, ազատականացում) արդիւնքների խորը հետազօտութիւն-վերլուծութիւն եւ գնահատում: Ցանկացած նորաստեղծ օրէնք, կիրառման առաջին փուլից յետոյ պէտք է ենթարկուի արդիւնքների գնահատման, որոշելու համար այն օգտակար եւ անհրաժե՞շտ էր, թէ՞ ոչ: Իսկ մենք երկրի ամբողջ համակարգն ենք փոխել, Հայաստանը դարձրել աշխարհի ամենասեփականաշնորհուած երկիրը եւ չենք ուզում բաց աչքերով նայել հետեւանքներին: Միգուցէ այդ ժամանակ եւ իշխանութեան եւ ընդդիմութեան շարքերում լրջօրէն կը քննարկուի՞ համակարգի, հետեւաբար նաեւ Սահմանադրութեան փոփոխման հարցը: Հայաստանը պէտք է սահուն անցում կատարի լիբերալ համակարգից՝ սոցիալ-դեմոկրատականի: Սա է Հնչակեան կուսակցութեան համոզմունքը եւ Ծրագրային նպատակը:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Երուանդ Պապայեան գնահատելով «Մասիս»ի բովանդակութիւնը եւ հայրենասիրական առողջ ուղղութիւնը, $50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ*

*ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆԻ մահուան տասնըմէկերորդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 23 Յունուար, 2011ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:*

*Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

*Սգակիրներ՝ Տէր եւ Տիկ Արա Ֆերմանեան*
*Վիգէն Գույումճեան*

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՇԱՔԷ ԹՕԳՃԵԱՆի մահուան տխուր առիթով (մահացած Գանատա) «Մասիս» իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն, մասնաւորաբար եղբօր Պօղոս Մուլթաֆեանին, քրոջ Մարի Գալթագճեանին եւ համայն պարագաներուն:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Հանգուցեալ ՕԺԷՆ ՃԷՐԷՃԵԱՆի զաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց մօր սուգին, այցելութեամբ, հեռաձայնով, ծաղկեպսակով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:*

## ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

*Շարունակուածէջ 2-էն*

*իրականացուող միջոցառումներին սեփական պաստառներով, կոչերով եւ այլն դեմոկրատական հանրութեան այցելումը եւ այդ միջոցառումների հրապարակային, կազմակերպուած լքումը;*

*- Այս կամ այն խանութի/ների, որոշակի ապրանքատեսակների հրապարակային եւ կազմակերպուած բոյկոտը: Ակցիայի այս տեսակը յատկապէս ազդեցիկ կը լինի, երբ այդ խանութները, կամ ապրանքատեսակները կապուած լինեն վատ համբաւ ունեցող պաշտօնեաների եւ օլիգարխների հետ: Այդ ակցիաները կարելի է կազմակերպել ինչ-որ կոնկրետ ժամկէտով, այնպէս էլ անժամկէտ;*

*- Հասարակական տրանսպորտի՝ օրինակ, «մարշրուտկաների» հրապարակային եւ կազմակերպուած բոյկոտը: Այդ ակցիաները նոյնպէս կարելի է կազմակեր-**պել ինչ-որ կոնկրետ ժամկէտով, այնպէս էլ անժամկէտ;*

*- Հանրային գիտակցութեան վրայ ազդող կոչեր(օրինակ, «իմ ձայնը չի վաճառւում», «ո՛չ բռնապետութեանը», «ընտրութիւնները կեղծողները ազգի դաւաճաններ են» եւ այլն) պարունակող յատուկ տարբերանշանների, հագուստի կրումը հանրային վայրերում:*

*Հարկ է նշել, որ պայքարի տարատեսակ միջոցառումները պէտք է կիրառել համակարգուած կերպով եւ ըստ նախօրոք մշակուած ռազմավարութեան եւ մարտավարութեան: Իրականացուած իւրաքանչիւր ակցիայի արդիւնաւէտութիւնը պէտք է գնահատուի նրա կազմակերպիչների կողմից: Կատարուած գնահատականների վրայ պէտք է կատարուի մարտավարութեան, իսկ անհրաժեշտութեան դէպքում, նաեւ ռազմավարութեան փոփոխութիւն:*

## ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

*Շարունակուածէջ 8-էն*

*տալով աւելի գիտակից եւ ապրումով երգեցողութեան՝ Կաղանդի աշխուժ երգերուն եւ Ծննդեան շարականներուն, որոնք յաճախ երեք լեզուներով ներկայացուեցան, երբեմն համեմուեցան մեներգներով եւ ասմունքներով, ընկերակցութեամբ զանազան երաժշտական ձայնային գործիքներու:*

*Հայ Քոյրերու Վարժարանի աշակերտներուն կողմէ Սուրբ Ծննդեան աւանդական նուէրն է, Ամանորի սեմին, նուիրուած ծնողներուն, որոնք մօտաւորապէս մէկուկէս ժամ մեծ հաճոյքով եւ պատասխանատուութեամբ ներկայացուցին գեղեցիկ երգերու հոյլ մը՝ համադրուած եւ պատրաստուած վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պաղտասարեանի կողմէ:*

*Տնօրէնութեան, ուսուցչական կազմի, ծնողներու եւ աշակերտութեան համագործակցութեամբ իրականացած գեղարուեստական սքանչելի երեկոյ մը, որ կ'արդարացնէ Հայ Քոյրերու Վարժարանի Քրիստոնէական դաստիարակութեան սկզբունքը, աշակերտները պահելով հայ խօսքի, երգի եւ շարական երգեցողութեան մթնոլորտին մէջ՝ ի գոհունակութիւն դաստիարակին եւ ծնողքին:*

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ

*Շարունակուածէջ 7-էն*

*ներ կատարեց Հայց. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Մայր Հայրենիքի, Արցախի պետութեանց եւ մեր հայրենակիցներու քաջառողջութեան եւ բարգաւաճութեան համար:*

*Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր պատգամին մէջ կը գրէր.-*

*Սիրելի եղբայրներ եւ քոյրեր, այսօր աւետաբեր հրեշտակի ձայնն է հնչում մեր հոգիներին. «Ծնուեց ձեր Փրկիչ, որ օծեալ Տէրն է»: Ելնենք Տիրոջն ընդառաջ՝ ինչպէս մոգերն ու հովիւները, Բեթղեհէմեան մսուր դարձնենք մեր հոգիները՝ ընդունելու Մանուկ Յիսուսին: Նորածին Փրկչի սնարի առջեւ աղօթք բարձրացնենք, որ երկնային շնորհներով զօրանան երկրի վրայ խաղաղութեան, մարդկանց մէջ հաճութեան ուղիները, եւ մեր կեանքից չպակասի Աստծոյ ներկայութիւնը սրտով զգալու եւ հոգով ճանաչելու զօրութիւնը, որպէսզի միշտ ցնծան մեր հոգիները, եւ մեր շուրթերը փառաբանութեամբ հնչեն շնորհաբեր բարի լուրը. Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:*

*Սուրբ Պատարագի աւարտին Սրբազան Հօր հանդիսապետութեամբ կատարուեցաւ Ջրօրհնէքի Արարողութիւն: Խաչի կնքահայրն էր Մայր Տաճարի կնքահայրերէն Տիար Օննիկ Կառավարեան, որ արժանացաւ Սրբազան Հօր օրհնութիւններուն:*

*Ապա Սրբազան Հայրը իր գրասենեակին մէջ ողջունեց Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոսը, Թեմական Խորհուրդի Փոխ Ատենապետ՝ Տիար Ռապըրթ Է. Պարսամը եւ արարողութեան ներկայ գտնուող յագարժան հիւրերը, շնորհաւորեց անոնց Սուրբ Ծնունդը եւ բարեմաղթութիւններ կատարեց:*

### ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

*Մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տօնին օրը՝ Յունուար 6ի երեկոյեան ժամը 6:00ին Առաջնորդ Սրբազան Հայրը իր կողքին ունենալով Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան եւ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, հոգեւորականներու եւ սարկաւագներու թափօրով եւ «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճար:*

*Առաջնորդ Սրբազան Հօր հանդիսապետութեամբ կատարուեցաւ աւանդական Տնօրհնէքի արարողութիւնը: Սրբազան Հայրը տուաւ իր հոգեւոր պատգամը, ըսելով.-*

*«Ամենայն տուրք բարիք ի վերուստ են իջեալք առ ի քէն, որ ես հայր լուսոյ»: Մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Սուրբ Ծնունդը խոնարհութեան ամենէն տեսանելի եւ շօշափելի ներկայութիւնն է մարդկութեան կեանքին մէջ: Յիսուսի ծնունդը ուրիշ խօսքով այն ճանապարհն է, որուն առջեւ խոնարհող մարդը ինքզինք կ'առաջնորդէ դէպի Աստուած: Կեանքի այս ընթացքը կը թելադրէ բարոյական կեանքի ընթացք, որը պիտի դառնայ աստուածային լոյսը մատակարարող հոգեւոր տաճարը: Իսկ քրիստոնէական առումով խոնարհիլ կը նշանակէ ծառայել. ծառայել Աստուծոյ, ծառայել ընտանիքին, ծառայել միմեանց: Տակաւին ծառայել բառին ամենալայն առումով կը նշանակէ դառնալ խաղաղութեան գործիք»:*

*Իր խօսքի աւարտին ողջունեց Կլէնտէյլի Քաղաքապետ՝ Տիար Արա Նաճարեանին եւ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեանի ներկայութիւնը եւ բարեմաղթութիւններ կատարեց: Ապա հրաւիրեց Պրն. Յովհաննիսեանը, որ իր սրտի խօսքը ուղղէ ներկաներուն: Պրն. Յովհաննիսեան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր՝ իր համագործակցութեան համար եւ շեշտեց համերաշխութեան, սիրոյ եւ համագործակցութեան ոգին՝ զօրավիգ կանգնելու Մայր Հայրենիքին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ այս տարի միասնաբար տօնախմբելու վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան 20ամեակը:*

*Սրբազան Հօր հրաւէրով հաւատացեալները ուղղուեցան դէպի Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճ, ուր Սրբազան Հայրը Սուրբ Ծննդեան Տօնին բոլորին նուիրեց կրօնաշունչ գիրքեր եւ ա՛յլ նուէրներ:*

*Հիւրասիրութիւնը պատրաստած էին Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը՝ Ատենապետութեամբ Տիկին Սէնտի Նորեանի եւ Տիկնանց Կեդրոնական Վարչութեան Ատենապետուհի՝ Տիկին Արաքսի Պոյամեանի, ինչպէս նաեւ իրենց մասնակցութիւնը բերած էին Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի, Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ, Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ, Վէն Նայսի Սուրբ Պետրոս, Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Կլէնտէյլի Սուրբ Պետրոս, Լա Գանիատա եւ Քրիսէնթա Հովիտի, Լա Վըրնի եւ Սանթա Գլարիթայի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան մասնաճիւղերը:*

*Յատուկ շնորհակալութիւն նաեւ՝ La Fogata Catering-ի, Ritz Collection-ի, Phoenicia Restaurant-ի, Aslan Reastaurant-ի, Տէր եւ Տիկին Անդրանիկ Զօրայեանի, Տէր եւ Տիկին Ալօ Մարգարեանի եւ Lebanese Arak-ի, Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Արսինէ Սէրայտարեանի, որոնք նուիրեցին հիւրասիրութեան ճաշերն ու ըմպելիները, ինչպէս նաեւ նուէրներու յատուկ տոպրակները:*

**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՌԱԴԻՕ ԵԹԵՐ ՇՕ**
**Ամէն Կիրակի երեկոյեան**
**ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

# ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԱՃԵԱՆ

*Շարունակուած էջ 13-էն*

*եան եւ Եփրեմ Տոհմունի արքեպիսկոպոսներուն:*

*Ընտրութենէն եւ օծման հանդիսութիւններէն յայտնօրէն կը բացակայէր Բերիոյ Թեմի առաջնորդ Արտաւազդ Արքեպս. Սիւրմէյեան, որ եղած էր «մրցորդ թեկնածուն» կաթողիկոսական ընտրութեան մէջ, առանց նկատի ունենալու որ Սարաճեանն էր արժանաւոր դէմքը՝ Սիսէն մինչեւ Անթիլիաս որպէս հաւատարիմ հոգեւորականը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ նաեւ եղած էր Անթիլիասի նորահաստատ կայքին շինարարութեանց յղացողն ու գործադրողը: Սիւրմէյեանի առած փառատենչիկ որոշումը յանգեցաւ իր երկրորդ քայլին զոր առաւ անմիջապէս՝ հրաժարելով իր Թեմէն եւ Աթոռէն:*

### Միայն Չորս Ամիս Գահին Վրայ

*Պետրոս Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ իր անձնական ծախքով կառուցեց նաեւ Մայր Տաճարի Հայրապետական մարմարեայ Գահը՝ իր ճաշակով: Ան այդ գահուն վրայ նստաւ միայն երկու անգամ իր անժամանակ վախճանումին հետեւանքով: Կաթողիկոսութեան սկիզբէն թէեւ տկար եւ հիւանդագին, Պետրոս Կաթողիկոս կարողացաւ իր գահակալութեան չորս ամիսները արդիւնաւորել ներքին կազմակերպչական աշխատանքներով: Կարեւորագոյնը անոնցմէ 1940 թուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ներքին Կանոնագրութիւնը եղաւ, 18 յօդուածներէ բաղկացած, զոր վաւերացնել տուաւ նոյն տարուոյ Օգոստոս 1-2 օրերուն գումարուած եպիսկոպոսական ժողովին կողմէ անոր գործադրութիւնը հրահանգելով Հոկտեմբեր 2-ին, որ ափսոս եղաւ նաեւ իր թաղման օրը:*

*Պետրոս Կաթողիկոսի միւս գործը եղաւ Բերիոյ Թեմի հրաժարեալ Առաջնորդ Արտաւազդ Արքեպս. Սիւրմէյեանի հարցին քննութիւնը: Սիւրմէյեան իր 1940 Մարտ 3-ի նամակով կը գրէր Տեղապահ Պետրոս Սարաճեան արքեպիսկոպոսին իր հրաժարման մասին, յայտնելով թէ Մարտ 1-ի հեռագրով Փարիզի համայնքը զինք «առաջնորդ ընտրած էր Ֆրանսայի եւ շրջակայ երկիրներու հայ համայնքներուն»: Պետրոս Սարաճեան Կաթողիկոս իր Մայիս 13 թուակիր գրութեամբ պատասխանած էր Արտաւազդ Արքեպիսկոպոսին թէ «այսպիսի յանկարծակի հրաժարում մը օրինական պայմանները չէր յարգեր», յորդորելով չհեռանալ Թեմէն եւ Աթոռէն: Ի ձեռին չունենալով ոչ մէկ պաշտօնագիր Հայրապետը Սիւրմէյեան Սրբազանի նոր պաշտօնին կապակցութեամբ, հարցը եպիսկոպոսական ժողովին կը յանձնէր, որմէ ետք կ՚որոշէր ընդունիլ հրաժարականը ու փոխարէն Բերիոյ Թեմին համար Զարեհ Ծ. Վրդ. Փայասլեան նշանակել որպէս առաջնորդական տեղապահ: Սիւրմէյեան Սրբազանի մեկնումով Աթոռ կը մնային Պետրոս Կաթողիկոսի կողքին միայն Սիսի հաւատարիմ երեք եպիսկոպոսները՝ Կարոյեան, Աջապահեան եւ Տոհմունի Սրբազանները:*

*Պետրոս Կաթողիկոսի վերջին գործը պիտի ըլլար կատարուած շինարարական աշխատանքներուն հաշուեկշիռը պատրաստել տալ յատուկ յանձնախումբի մը միջոցաւ: Տեղեկագիրը «իր բոլոր մանրամասնութիւններով եւ վաւերագիրներով» քննութենէ անցընելէ ետք ներկայացուեցաւ Կաթողիկոսին առ ի վաւերացումն:*

### Պետրոս Ա Կիլիկիոյ Կաթողիկոսին Միակ Կոնդակը

*Կաթողիկոսական իր օծումէն անմիջապէս ետք, 1940 Յունիս 15 թուակիր, Պետրոս Ա Կաթողիկոս գրեց իր անդրանիկ եւ միակ Կոնդակը «յուզումով եւ հաւատքով», նախ իր տարագրեալ Աթոռի Թեմերու հոգեւոր եւ աշխարհական իշխանութեանց, եւ ապա Հայ Եկեղեցւոյ Նուիրապետական Աթոռներուն ուղղեալ, յարգալից յիշելով այս վերջինները առանձինն: Համաշխարհային Բ Պատերազմի բերելիք աւերին ետեւ Հայրապետը կը տեսնէր «համաշխարհային հրդեհ մը որ ամբողջ աշխարհը մղձաւանջի տարած էր», եւ որուն ետին կը տեսնէր նաեւ փոքր ազգերու ինքնորոշման իրաւունքներու խախտումը՝ բիրտ ուժին գործադրութեամբ, ինչպէս նաեւ մեր սկզբունքներու ոտնակոխումը «հսկայ ուժերու ճնշումին տակ»:*

### Պետրոս Ա Կաթողիկոսի Վախճանը

*Մեծի Տանն Կիլիկիոյ Տ.Տ. Պետրոս Ա Կաթողիկոս Սարաճեան ծանր հիւանդութեան հետեւանքով կը վախճանէր 1940 թուի Սեպտեմբեր 28-ին, 70 տարեկանին, հազիւ չորս ամիս գահակալելէ ետք: Հայրապետը իր քառամսեայ շրջանը հիւանդագին եւ տառապալից անցուց, եւ Յունիս 13-ի Թարգմանչաց օրը եկեղեցւոյ մէջ սրտի յանկարծակի տագնապ մը անցուց, որմէ ետք իր համեմատական առողջութիւնը չվերագտաւ: Կաթողիկոսին վիճակը վատթարանալով Սեպտեմբեր 28-ին Պետրոս Ա աւանդեց իր հոգին:*

*Վախճանման լուրը հասնելուն, Երուսաղէմէն ի դիմաց Մեսրոպ Պատրիարք Նշանեանի զոյգ մը վարդապետներ ներկայ եղան վերջին օծման զոր շաբաթ մը ետք կատարեց Աթոռին Տեղապահը՝ Եղիշէ Արքեպիսկոպոս Կարոյեան, Թեմական առաջնորդներու մասնակցութեամբ: Օծման եւ յուղարկաւորութեան կարգը կատարուեցաւ Պէյրութի Ս. Նշան մայր եկեղեցւոյ մէջ, եւ ապա թափօրը համրընթաց նոյն օր յառաջացաւ քաղաքի արուարձաններէն ու հասաւ Անթիլիասի Կաթողիկոսարան: Նոյն օր երեկոյեան տեղի ունեցաւ Հայրապետին թաղումը եւ Շինարար Կաթողիկոսին մարմինը ամփոփուեցաւ իր կերտած Մայր Տաճարի հիւսիսային կողմը, իր նախորդին եւ հոգեւոր ծնողին Տ.Տ. Սահակ Բ Խապայեան Կաթողիկոսի շիրիմին կից:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**
**(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**
**1060 N. ALLEN AVE. PASADENA**
**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**
**«Մասիս» Շաբաթաթերթին**
T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net


